grande rilevanza, tra i quali va sottolineata l'identificazione di frammenti altamente diagnostici di ceramica Kura-Arasse. Il manufatto più interessante scoperto è parte di un vaso realizzato in ossidiana. Questo recipiente, purtroppo frammentatosi in antico come suggerisce un'analisi approfondita, ha una superficie ruvida, circostanza che lascia pensare che il manufatto fosse incompiuto. Questo tipo di oggetti veniva infatti solitamente lucidato, e potrebbe essere connesso alla presenza, nel sito di Kaghsi-2, di un centro di produzione di manufatti in ossidiana. Recipienti di questo tipo, realizzati in ossidiana, sono noti da alcuni siti vicino orientali risalenti al VI-III millennio a.C.

Questo ritrovamento è il primo di questo tipo effettuato nella regione.

Jrarat (KSP006; Antica e Tarda Età del Bronzo, Età del Ferro, Medioevo)

La grande necropoli di Jrarat è una delle testimonianze più sorprendenti della continuità insediativa che caratterizza l'Altopiano armeno. Il luogo, minacciato da recenti attività costruttive che hanno reso necessari gli scavi archeologici, è stato utilizzato come area funeraria a partire del Bronzo Antico sino ad oggi. Sono state infatti identificate sepolture intatte e sconvolte del Bronzo Antico, del Bronzo Tardo, di varie fasi dell'Età del Ferro, del Medioevo, oltre ad un cimitero moderno che insiste sul sito. Nel corso della missione del 2022, per circa un mese, è stata investigata una sepoltura circolare di 10 metri di diametro, che si è rivelata essere una imponente tomba della Tarda Età del Bronzo, composta da due camere e da un circolo di pietre di grandi dimensioni che delimi-

tava l'area del complesso. Lo scavo ha permesso di ricostruire i complessi rituali di deposizione e l'esatta sequenza di costruzione della sepoltura, caratterizzata da camera sepolcrale e da un deposito rituale di materiali ceramici. La camera posta al centro del circolo di pietre era stata sconvolta in antichità e saccheggiata, probabilmente, pochi anni dopo la deposizione, per il recupero dei materiali metallici. I resti umani sconvolti erano riferibili ad un individuo di sesso maschile in età piuttosto avanzata, certamente un membro di spicco della comunità dell'epoca come suggeriscono le proporzioni della tomba e la composizione del corredo, in particolare della fossa rituale, rinvenuta intatta nella parte orientale del circolo di pietre. La deposizione consisteva di una camera di dimensioni minori contenente trentasette vasi completi attribuibili senza dubbio alla tarda Età del Bronzo, un bracciale in metallo e numerosi vangi di collana. Inoltre sono stati rinvenuti almeno due animali sacrificati ritualmente, un capride e un maiale. Lo scavo in microstratigrafia di tutti i vasi ha permesso di rinvenire vangi di collana e altri oggetti contenuti al loro interno e di campionare materiali organici per determinare, dove possibile, il contenuto. In alcuni recipienti da cucina, ad imitazione di noti prototipi metallici, erano conservate ossa animali pertinenti a pasti rituali preparati in occasione della deposizione. Il deposito non fu saccheggiato in antico poiché o se ne era persa la conoscenza per via della posizione decentrata all'interno del circolo di pietre, oppure perché chi predò la ca-

mera centrale sapeva dell'assenza di metalli al suo interno. Accanto alla tomba principale abbiamo individuato una seconda sepoltura che si addossava a quella scavata, quindi cronologicamente successiva. Questa tomba insieme ad altre già individuate a diversi metri di distanza da essa sarà oggetto di indagine nei prossimi anni.

Hatis (KSP163; Età del Bronzo e del Ferro)

Tra i siti più importanti documentati nel corso delle attività del Kotayk Survey Project non può non essere annoverata la fortezza posta sulla sommità del monte Hatis. Il complesso è situato a oltre 2500 m di altezza e domina la media valle del fiume Hrazdan. Le strutture sono in alcuni casi sovrapposte a colate laviche originate dall'attività del vulcano estinto, che ha prodotto le rocce utilizzate per la costruzione. Il complesso rientra tra i più spettacolari esempi di fortezze-rifugio di epoca protostorica della regione. Purtroppo, il sito e la montagna sono stati in parte devastati attraverso l'utilizzo di mezzi meccanici nel



Ciotola baccellata urartea in bronzo, con iscrizione del re Sarduri
Սարգսի արքայի արձանագրությանը ուրարտական բրոնզե թափ

2022 per l'installazione di una statua monumentale, che è stata bloccata dalle autorità. Nell'estate del 2023, per circa tre mesi, la missione congiunta armeno-italiana si occuperà di uno scavo di emergenza per documentare quanto rimasto delle strutture e investigarne la sequenza stratigrafica e i materiali per determinarne i periodi di occupazione.

EUROPA NOSTRA AWARDS /

European Heritage Awards 2019

SOLAK-1: un modello di archeologia predittiva

Il Regno di Urartu, che si sviluppò tra il IX e l'VIII secolo a.C. nel territorio dell'Armenia moderna, regnò su un vastissimo territorio che corrispondeva a quello della grande Armenia classica e quindi esteso oggi anche nei territori della Turchia orientale dell'Iran nord-occidentale. Lo stato urarteo e la sua dinastia regnante declinarono sino a scomparire completamente in un momento non meglio precisabile tra il VII e il VI secolo a.C. L'eredità di Urartu fu raccolta e proseguita durante il periodo Achemenide dagli Orontidi (VI-III secolo a.C.), la prima

dinastia indigena dell'altopiano armeno, che occupò tutti i principali centri politici e militari urartei. La scoperta del sito di Solak-1/Varsak nell'ambito della cooperazione armeno-italiana del Kotayk Survey Project ha permesso di arricchire profondamente la conoscenza della presenza urartea in Armenia, dell'interazione tra Urartu e le comunità locali e della straordinaria continuità culturale che accomunò Urartu alle dinastie che lo seguirono. Il Kotayk Survey Project (KSP) ha applicato modelli predittivi e strumenti moderni per identificare più di 200 siti nella regione, databili tra la preistoria e il Medioevo. Il modello di ricerca predittiva, sviluppato tramite software GIS, ha portato alla scoperta della fortezza Solak-1/Varsak. Il grande sito e il complesso fortificato di epoca urartea, i primi nel loro genere rinvenuti nella zona, colmano un'importante lacuna nella ricostruzione del sistema insediativo di Urartu nella regione. Il progetto scientifico che ha condotto alla scoperta del sito archeologico, con i suoi 32 ettari di estensione uno dei più rilevanti per l'Età del Ferro della regione, e il progetto di investigazione e valorizzazione dell'area attraverso la realizzazione di un parco eco-archeologico è stato premiato nel 2019 con il "Premio del patrimonio culturale dell'Unione europea – concorso Europa Nostra" (*European Union Prize for Cultural Heritage/Europa Nostra Awards*). Si tratta del più prestigioso premio della Comunità Europea in riferimento alla tutela e alla valorizzazione del patrimonio culturale e il Progetto "Solak-1: un modello di archeologia predittiva" è stato premiato nella categoria *Research*. Motivo di particolare orgoglio, che sottolinea ulteriormente l'importanza della cooperazione internazionale, è che questo progetto è il primo nella storia del-



Il progetto di ricerca del sito di Solak-1 premiato con Europa Nostra Awards nel 2019

2019 թ. Սոլակ-1 հնավայրում իրականացվող
հետազոտությունը ներկայացվել է Եվրոպա Նոստրա
մրցանակաբաշխությանը

l'*Europa Nostra Awards/ European Heritage Awards*, sin dalla sua creazione nel 2002, a vedere premiati congiuntamente due paesi, Armenia e Italia, per un singolo progetto di ricerca. Il progetto di ricerca, co-diretto da Artur Petrosyan (IAE NAS RA) e Roberto Dan (ISMEO), vede la collaborazione di una squadra internazionale composta da studiosi e studenti di numerose nazionalità con molteplici competenze che includono anche archeobotanici, archeozoologi, antropologi, chimici, architetti, topografi e museologi. Tutte le attività di ricerca sono condotte in stretta collaborazione con istituzioni e studiosi locali e particolare attenzione è posta alla formazione del personale locale e delle maestranze qualificate attraverso corsi e attività sul campo, nonché alla formazione scientifica degli studenti provenienti dalle università, dalle accademie e dalle scuole armene.

La giuria dell'*Europa Nostra/ European Heritage Awards* in merito al progetto “Solak 1: un modello di archeologia predittiva” ha affermato:

“This research is the fruit of a multidisciplinary international cooperation on Urartian heritage which has been under-researched to date. It is an excellent example of achieving an outstanding outcome with limited resources”.

“This Armenian-Italian collaboration of experts highlights a cultural continuum from ancient times



Premiazione di Europa Nostra Awards 2019 (a sinistra i due direttori Roberto Dan e Artur Petrosyan)

Եվրոպա Նոստրա 2019 թ. մրցանակների հանձնման արարողությունը (ձախ կողմում ծրագրի երկու համադրեկավարները՝ Ռոբերտո Դանը և Արթուր Պետրոսյանը)

to the present, making antiquities not an alien component but an integral part of the life of communities. This is evidenced by the selection of the Solak 1 site as part of the first archaeological park in Armenia”.

“This project has provided training in the field and in scientific research, ensuring the sustainable management and development of heritage protection in the region”.

Aruch Արուճ



Cattedrale di San Grigor, sito di Aruch
Արուճ հնավայրի Սր. Գրիգոր կաթողիկե եկեղեցին



Particolare del muro di cinta del fortilizio di Aruch
Արուճի ամրոցի պարսպապատի մանրամասներ



Un muro del fortilizio di Aruch con
tecnica edilizia antisismica
Սեյսմակայուն շինարարական տեխնիկայով
կառուցված Արուճի ամրոցի պատը



Lo scavo del 2022 nel fortilizio di Aruch
che ha esposto la fase monumentale del
complesso

Արուճի դղյակում 2022 թ. պեղումներով
բացահայտված մոնումենտալ համալիրը



Stele con decorazione zoomorfa acefala rinvenuta *in situ*, sul pavimento lastricato esposto nella fase monumentale del fortilizio di Aruch

Արուն ամրոցում՝ սալահատակի վրա հայտնաբերված կենդանակերպ զարդաքանդակը



Scavo archeologico nel sito di Aruch, campagna di scavo 2022
2022 թ. Արուն հնավայրի պեղումները



Documentazione archeologica nel sito di Aruch
Փաստաթղթավորման գործընթացը Արուն հնավայրում



Frammento di *khatchkar* reimpiegato come materiale da costruzione nel muro esterno meridionale della Cattedrale di San Grigor, nel sito di Aruch

Արունի Սուրբ Գրիգոր տաճարի հարավային պատի մեջ օգտագործված խաչքարի բեկոր



Frammento di *pithos* con bollo da Aruch
Դրոշմազարդ կարասի բեկոր Արունից



Esempi di ceramica invetriata da Aruch
Արուից հայտնաբերված խեցեղենի օրինակներ



Documentazione archeologica del sito di Aruch
Արուի հնավայրի փաստաթղթավորման գործընթացը



Stele zoomorfa acefala rinvenuta nei
livelli monumentali del fortilizio
di Aruch, campagna di scavo 2022

Արուի մոտ հայտնաբերված
կենդանակերպ սալաքարը, 2022 թ.



Documentazione archeologica del sito di Aruch
Արուճ հնավայրի փաստաթղթավորման գործընթացը



Tonir sul piano lastricato rinvenuto nei livelli monumentali
del fortilizio di Aruch
Արուճի դղյակում սալահատակի վրա հայտնաբերված թոնիրը



Tonir dal fortilizio di Aruch,
campagna di scavo 2022
Արուճի դղյակում հայտնաբերված թոնիրը, 2022 թ.



Iscrizione posta sopra l'accesso
meridionale della Cattedrale
di San Grigor, Aruch

Արուճի Սուրբ Գրիգոր տաճարի
հարավային մուտքի վերևում
տեղադրված արձանագրությունը

Vayots Dzor Վայոց ձոր



Khatchkar del noto architetto Momik nella cattedrale di Noravank

Հարտարապետ Մոմիկի քանդակած խաչքարը Նորավանքում



Sito vicino al villaggio di Arin. Sulla sommità si trova un insediamento proto-storico, sul fianco una grotta con resti preistorici

Արին գյուղի մոտակայքում գտնվող հնավայրը, որը բաղկացած է բնակատեղիից և քարայր կացարանից



Fortezza di Ertij, nel Vayots Dzor.

Էրթեյ ամրոցը Վայոց ձորում



Panoramica dell'insediamento medievale di Areni

Արփա միջնադարյան բնակատեղիի համայնապատկերը



Un paesaggio tipico del Vayots Dzor
Վայոց ձորին հատուկ բնապատկեր



La celebre Cattedrale di Noravank
Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցին



Kotayk Կոտայք



Giaretta con sostegni laterali da una sepoltura del Tardo Bronzo della necropoli di Jrarat

Ջրատափի ուշբրոնզեդարյան
դամբարանադաշտից հայտնաբերված
սավիորը



Ciotola con bordi rientranti centralmente, tipica del Tardo Bronzo, dalla necropoli di Jrarat

Ջրատափի ուշբրոնզեդարյան
դամբարանադաշտից հայտնաբերված
թասը



Vasetto miniaturistico da una sepoltura del Tardo Bronzo della necropoli di Jrarat

Ջրատափի ուշբրոնզեդարյան
դամբարանադաշտից հայտնաբերված անոթը



Una fortezza-rifugio ad alta quota costruita sfruttando la colata lavica nella regione del Kotayk. Si distinguono le mura perimetrali e alcune mura divisorie interne

Բարձրլեռնային գոտում քարացրտների մեջ կառուցված
ամրոց-ապաստարանը՝ հստակ ուղվագծվող պատերով



Veduta aerea della fortezza protostorica e medievale di Bjini
Բջինի ամրոցի օդալուսանկարը



Deposito votivo da una sepoltura del Tardo Bronzo
indagata nel 2022 nella necropoli di Jrarat
Ջրատատի ուշբրոնզեդարյան դամբանախցերից մեկի
ընդհանուր տեսքը



Una fortezza-rifugio ad alta quota costruita su colata lavica
nella regione del Kotayk
Բարձրլեռնային գոտում քարացրոնների մեջ կառուցված
ամրոց-ապաստարանը



Il vulcano del Guthanasar
Գութանասար հրաբուխը



Il famoso sito di Garni con il tempio di
epoca ellenistica
Գառնիի հեթանոսական տաճարը



Fortezza protostorica e medievale di Lori Berd
 Լորի բերդ միջնադարյան հնավայրը



Brocca decorata a baccellature e con ansa a gomito tipica dell'età del Ferro
 Երկաթի դարաշրջանին բնորոշ սափոր



Base di una brocca dell'età del Ferro con decorazione impressa sulla base
 Երկաթեդարյան սափորի հատակը



Ciotola carenata dell'età del Ferro
 Երկաթեդարյան տրամատավոր թաս



Veduta aerea della necropoli di Karashamb con la fortezza
protostorica circondata dall'ansa del fiume Hrazdan
Քարաշամբի դամբարանադաշտի և մերձակա ամրոցի
օդալուսանկարը



Greggi di pecore portate al pascolo sul sito
di Solak-1, ancora oggi zona di transumanza
Ռջխարի հոտը Սոլակ-1 հնավայրում արածելիս



Veduta panoramica della media valle del Fiume
Hrazdan con il sito di Hatis in primo piano
Հրազդան գետի միջին հոսանքի համայնապատկերը:
Առջևում՝ Հատիս հնավայրը



Veduta aerea della fortezza protostorica e medievale di Bjini
Բջնի ամրոցի օդալուսանկարը





Panoramica della sommità del sito urarteo di Solak-1
con le Strutture A e B
Սոլակ-1 հնավայրի համայնապատկերը



La fortezza protostorica di Berdi Glukh
Բերդի գլուխ ամրոցը



Panoramica della valle del Hrazdan, con il sito di Solak-1
in primo piano e il vulcano Guthanasar sullo sfondo
Հրազդան գետի հովտի համայնապատկերը: Առջևում
Սոլակ-1 հնավայրը և Գութանասար լեռը



Il sito di Meghradzor, Antica Età del Bronzo
Մեղրաձորի վաղբրոնզեդարյան ամրոցը



Particolare dei contrafforti sulle mura
di cinta del complesso fortificato
protostorico in alta quota di Tghit
Թղիթ ամրոցի որմնահեղերի
մանրամասները



Veduta aerea della media valle del Hrazdan
Հրազդան գետի միջին հոսանքի
համայնապատկերը

Particolare di una fortezza-rifugio
protostorica su colata lavica
Բարձրլեռնային տեղանքում
քարացրոնների մեծ կառուցված ամրոց-
պատսպարանի մանրամասները





Veduta aerea del vulcano del Guthanasar
Գութանասար հրաբուխի համայնապատկերը



Rilievo rupestre nel noto complesso monastico di Geghard
Պռոշանների զինանշանը Գեղարդավանքում



Vista della sommità del sito di Solak-1
e dell'Edificio A
Սոլակ -1 հնավայրի համայնապատկերը



I due archeologi Hayk Avetisyan e Boris Gasparyan
sul sito di Solak-1

Հնագետներ Հայկ Ավետիսյանը և Բորիս
Գասպարյանը Սոլակ-1 հնավայրում



Նախաբան

Հայաստանը տարածքով փոքր, սակայն ազդեցիկ մշակութային ժառանգություն և հազարամյա պատմություն ունեցող երկիր է: Գտնվելով Կովկասի, Իրանական և Փոքրասիական բարձրավանդակների և Միջագետքի խաչմերուկում, նպաստել է ժամանակի ծաղկուն քաղաքակրթությունների զարգացմանը: Մինչպատմական, նախապատմական և վաղպատմական փուլերում տարածաշրջանն առանձնանում էր ինքնատիպ մշակույթներ ունեցող, միջոցառող ինտենսիվ շփումներով ու հարաբերություններով հասարակություններով: Մ.թ.ա. 1-ին հազարամյակից այս տարածքում, Ուրարտու պետության (Վանի թագավորություն) զարգացմամբ Հայաստանը թևակոխեց պատմական փուլ: Ուրարտուի անկումից հետո Հայաստանի կառավարիչներն ու թագավորական դինաստիաները բազմաշերտ հարաբերություններով ամուր կապերի մեջ էին ժամանակի մեծ կայսրությունների հետ:

Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում հայ-իտալական հնագիտական արշավախմբերը՝ երեք հետազոտական ծրագրերով, նպատակ ունեն ուսումնասիրել վաղագույն շրջանի հասարակությունների ձևավորման գործընթացները, նրանց կապերը հարևան շրջանների հետ, ուսումնասիրել Ուրարտական պետության առաջացման նախադրյալները և նրա փոխհարաբերությունները տեղական վերնախավի ու հասարակությունների հետ, Ուրարտուի կազմալուծման և Աքեմենյան կայսրության տիրապետության սկզբնավորման միջև անցումային շրջանի մշակութային լանդշաֆտը, ինչպես նաև Մետաքսի ճանապարհի կարևոր հատվածի երկայնքով ձգվող ամրոցաշինության գործընթացները:

2013 թ. սկսած ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և «Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի» (ISMEO) միջև համագործակցության համաձայնագրի շրջանակում իրականացվում է Կոտայքի հետազոտական ծրագիրը, որին աջակցում և համաֆինանսավորում է նաև Իտալիայի արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարարությունը (ղեկավարներ՝ Արթուր Պետրոսյան (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ), Ռոբերտո Դան (ISMEO): 2016 թ. Բորիս Գասպարյանի (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ / ԵՊՀ), Արթուր Պետրոսյանի և Ռոբերտո Դանի ղեկավարությամբ մեկնարկեց Վայոց ձորի նախագիծը: 2022 թ. վերոհիշյալ համաձայնագրի շրջանակում Արսեն Բոբոյանի (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ / ԵՊՀ) և Սերջիո Ֆերդինանդիի (ISMEO) գլխավորությամբ մեկնարկեց մի նոր հնագիտական ծրագիր, որը միտված է ուսումնասիրելու Մետաքսի ճանապարհի երկայնքով ձգվող ամրաշինական համակարգը՝ կենտրոնանալով հիմնականում միջնադարյան Արուճ ավանի վրա:

Բոլոր նախագծերը նախատեսում են լայնածավալ և համակողմանի ուսումնասիրություն: Առաջնային նպատակը տարածաշրջանային հնագիտական քարտեզների ստեղծումն է, որոնք կընդգրկեն պալեոլիթից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանների հնավայրերը: Զուգահեռ իրականացվում են հնագիտական պեղումներ պատմա-հնագիտական առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հուշարձաններում՝ դրանց բնակության ժամանակաշրջանները հստակ պարզելու նպատակով:



Բոլոր նախագծերը նախատեսում են համագործակցություն միջազգային կազմակերպությունների և գիտնականների հետ՝ միջմասնագետական թիմերի ձևավորմամբ, ինչը հնարավորություն է ընձեռում իրականացնել պեղումների շնորհիվ ձեռք բերված նյութերի արխիտեմտրիկ, ռադիոմետրիկ, կենսահնագիտական անալիզներ և վերակազմություններ: Հատուկ կարևորվում է պեղումներով բացված շինությունների և հնագիտական հավաքածուների պահպանումը, վերականգնումն ու հանրայնացումը:

Սույն հատորը նվիրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և «Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի» համատեղ գործունեության տասնամյակին և միտված է լայն հանրությանը համապարփակ ներկայացնելու հայ-իտալական համագործակցության՝ 2013-2022 թթ. ընթացքում կատարած աշխատանքները:

ԱՐՈՒՋԻ հնագիտական արշավախումբը Եվ միջնադարյան Ամրոցաշինությունը Մետաքսի ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հնագիտական արշավախմբի աշխատանքները մեկնարկել են 2022 թ.: Հետազոտական խումբը համակողմանի ուսումնասիրելու է Մետաքսի ճանապարհի՝ Հայաստանով անցնող ուղիները՝ պատմական զարգացման երկար ժամանակահատվածի սահմաններում: Պեղումների և ուսումնասիրությունների արդյունքները դիտարկվելու են Եվրասիայի հեռահար հաղորդակցության համակարգերի համատեքստում՝ ուշ անտիկ շրջանում և միջնադարում, թե՛ առևտրական, թե՛ ռազմական առումով, ուշադրությունը սևեռելով կովկասյան տարածաշրջանով և հատկապես Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող Մետաքսի ճանապարհի ուղիների երկայնքով կառուցված ամրոցների վրա: Այդ կապակցությամբ պեղումներ են իրականացվում Արուճում՝ արշավախմբի հիմնական պեղավայրում, և Շամիրամում:



Մայրաքաղաք Անիի համայնապատկերը՝
հյուսիս-արևմուտքից (ըստ՝ F.M.C. Texier, *Description de l'Arménie, de la Perse et de la Mésopotamie*, Parigi 1842-1845)
Veduta esterna del fronte nord-ovest della grande città di Ani, una delle capitali del Regno di Armenia (da F.M.C. Texier, *Description de l'Arménie, de la Perse et de la Mésopotamie*, Parigi 1842-1845)

Հետազոտական աշխատանքները Մետաքսի ճանապարհի երկայնքով

Մի տարածաշրջանում, որտեղ միջնադարյան հնագիտության ուսումնասիրությունն ավանդաբար կամ հիմնականում կենտրոնացած է կրոնական

ճարտարապետության վրա (դրա վառ վկայությունները երկրում պահպանվել են սկսած մ.թ. 4-5-րդ դդ.), առանձնահատուկ բնույթ է ստանում միջնադարյան ճանապարհային և ամրաշինական համակարգերի վրա հիմնված ուսումնասիրությունը: Մասնավորապես՝ վաղ

* <<https://silkroad.missionearcheologica.it>>, Մերջիո Ֆերդինանդիի և Արսեն Բորոխյանի գլխավորած արշավախումբը ֆինանսական աջակցություն է ստանում Իտալիայի Արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարարության, ISMEO-ի, ինչպես նաև Poste Italiane, Canon, Isweb, WebLive, NextBytes, IET, Noema և Italian Digital Revolution-ի կողմից: 2022 թ. հնագիտական պեղումներին մասնակցել են Պավել Ավետիսյանը, Արթուր Պետրոսյանը, Աստղիկ Բաբաջանյանը, Ռոբերտո Դանը, Պրիշիլա Վիտորյո, Կամիլա Ֆելիչիոնին, Ֆրանչեսկա Գալանտին, Կիարա Մասկարելլոն, Խորխե Կոբոյտը, Ելենա Ֆաուստին, Ֆեդերիկո Ֆասսոն, Չեչիլիա Ռոմանուլին և Օտոֆրիո Գասպարոն:



Դաշտադեմի ամրոցը, Արագածոտնի մարզ
La fortezza di Dashtadem, provincia di Aragatsotn

միջնադարից սկսած և հատկապես զարգացած միջնադարում Հայաստանով էր անցնում Մետաքսի ճանապարհի (*Seidenstrasse*) հատվածներից մեկը, որը Սամարղանդով, Մերվով, Նիշապուրով, Ռեյով (Թեհրան) անցնում էր Թավրիզ և այնուհետ՝ Դվին,



Տաթևի վանքը, Սյունիքի մարզ
Il monastero di Tatev, provincia di Syunik

Արուճ, Թալին, Անի, ապա Կարին և շարունակվում դեպի Սև ծով: «Մետաքսի ճանապարհ» տերմինը, որն առաջին անգամ օգտագործել է գերմանացի հետախույզ և աշխարհագրագետ բարոն Ֆերդինանդ ֆոն Ռիխտոֆենը 1877 թ., իրականում վերաբերում է մի շարք ճանապարհներին, երթուղիներին և քարավանային ուղիներին, որոնք միացնում էին Հեռավոր Արևելքը Արևմուտքի հետ, և որոնց հիմնական վերջնական գաղտներն էին Կոստանդնուպոլիսը և Չանյանը՝ այժմ Սիան: Այն խոշոր առևտրային ուղի էր և առանձնահատուկ նշանակություն ունեցավ մինչև 15-16-րդ դդ., մինչև նավագնացության և գիտական հետազոտությունների զարգացման

մեկնարկը՝ ընդգրկելով Հեռավոր Արևելքի, Եվրասիական տափաստանների և Արաբական թերակղզու ուղիները, որոնց երկայնքով ոչ միայն փոխադրվում էր մետաքսի հումքը, այլև տարաբնույթ ապրանքներ: Այդ հնագույն

ճանապարհի հնագիտական հիշողությունը նշանակալի է: Բազմաթիվ գրական աղբյուրներ, ինչպիսիք են օրինակ՝ Հարուն ալ-Ռաշիդի «Հազար ու մեկ գիշեր» ը կամ Մարկո Պոլոյի «Միլիոնը», արժեքավոր տեղեկություններ են տալիս վերջինիս մասին:

Միջնադարում Հայաստանով անցնող երթուղիները առանձնահատուկ նշանակություն են ունեցել, քանի որ, չնայած իրենց լեռնային բնույթին և դժվարանցանելի վայրերին, դրանք միջազգային առևտրի համար ավելի անվտանգ էին, քան Միջագետքի և Սիրիայի հսկայական հարթավայրերով կամ անապատներով անցնող քարավանային ճանապարհները, որոնք խոցելի էին քաղաքական անկայունության

պայմաններում և հաճախ ենթարկվում էին ավազակային հարձակումների: Հայաստանը առաջնահերթ նշանակություն ուներ ճանապարհորդների և առևտրականների համար, ինչի մասին են վկայում 12-13-րդ դդ. այդ տարածքում կառուցված բազմաթիվ քարավանատները, այդ թվում՝ Արուճը:

2022 թ. հետախուզական աշխատանքներ են իրականացվել հիմնականում Արագածոտնի մարզում, որտեղ տեղակայված է 10-11-րդ դդ. դեպի Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անի ձգվող ճանապարհին տեղակայված պաշտպանական կառույցների մի մասը: Այդ տարածքում ուսումնասիրվել են բազմաթիվ բնակավայրեր և ամրոցներ (Անբերդ, Աղձք, Դաշտաղեն և այլն): Արագածոտնի մարզից բացի՝ Հայաստանի տարածքում ուսումնասիրվել են միջնադարյան բազմաթիվ այլ հնավայրեր և ամրաշինական կառույցներ, որոնք ընդգրկում են հյուսիսում՝ Վրաստանի սահմաններից մինչև հարավում՝ Իրանի միջև ընկած շրջանները: Արշավախմբի առջև դրված խնդիրներից մեկը տարածքում գտնվող պաշտպանական կառույցների հնագիտական քարտեզի կազմումն է, ինչպես նաև միջնադարյան ամրոցաշինության համակարգված



Բաղաբերդի ամրոցը, Սյունիքի մարզ
La fortezza di Baghaberd, provincia di Syunik

ուսումնասիրությունը: Այդ նպատակով այցելություններ են կատարվել բազմաթիվ հնավայրեր՝ իրականացնելով մանրակրկիտ փաստաթղթավորման աշխատանքներ՝ անօդաչու սարքերի և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Արուճ

Արուճը գյուղական բնակավայր է, գտնվում է Երևանից մոտ 40 կմ հեռավորության վրա (բարձրությունը ծ. մ. 1220/1230 մ): Գյուղը տեղակայված է Արագածից հարավ-արևմուտք, ջրային պաշարներով հարուստ սարահարթի վրա, որի էրոզիվ գործոնը ժամանակի ընթացքում խորը ձորեր է առաջացրել: Վաղ և զարգացած միջնադարյան շրջաններում Արուճը կարևոր ռազմավարական և առևտրային դիրք է զբաղեցրել, որի կարևորության մասին են վկայում մեզ հասած ճարտարապետական հուշարձանների մնացորդները:

Այն գտնվում էր միջնադարյան Հայաստանի երկու պատմական մայրաքաղաքների՝ Դվինի և Անիի միջև: 5-10-րդ դդ. Արուճը պատմական աղբյուրներում հիշատակվում է որպես իշխանական նստավայր և գործերի տեղակայման կարևոր հանգրվան: 5-րդ դ. կեսերին պատմիչ Եղիշեի՝



Սելիմի լեռնանցքի քարավանատունը
Il caravanserraglio sul passo di Selim



Արուճի ամրոցի օդալուսանկարը
Vista dall'alto del fortilizio di Aruch

Վարդանի և հայ նահատակների պատմությանը նվիրված երկում, Արուճը հիշատակվում է որպես թագավորական ձմեռոց-գորակայան: Արուճի ռազմավարական դիրքի վերաբերյալ տեղեկությունները հաստատվում են մ.թ. 655-656 թթ., երբ մատենագիր Մեբեոսը, անդրադառնալով այդ տարածքում մուսուլմանական կրկնվող հարձակումներին, հայտնում է գորավար Հաբիբ իբն Մասլամայի հրամանատարության տակ գտնվող գործերի տեղակայման մասին: Կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին իր պատմագրական աշխատության մեջ հիշատակում է 7-րդ դարում՝ տնտեսական և մշակութային կյանքի առանձնահատուկ ծաղկման և կայունության ժամանակաշրջանում, երկիրը ղեկավարած Գրիգոր Մամիկոնյան իշխանի՝ Արուճում կատարած շինարարական աշխատանքների մասին: Դրանք ընդգծում են Հայոց իշխանի դերը երկրի ղեկավարման գործում, որն ընդունելով արաբական գերիշխանությունը՝ կարողացավ պահպանել քաղաքական և կրոնական ինքնավարության զգալի

աստիճան՝ ստանձնելով միայն գործեր տրամադրելու պարտավորություն:

Հետազոտություններ Արուճի տաճարական համալիրում

Այս համատեքստում հայկական պաշտամունքային ճարտարապետության կարևորագույն հուշարձաններից մեկը՝ Արուճի Կաթողիկե տաճարը (հայտնի նաև Ս. Գրիգոր եկեղեցի), ինչպես նաև ամրոցի տպավորիչ համալիրը կառուցվում են մի տեղանքում, որն արդեն իսկ պաշտամունքային վայրեր ուներ:

Առաջին պեղավայրը բացվել է տաճարական համալիրի շրջակայքում, որտեղ, բացի Կաթողիկե տաճարից, գտնվում են մի շարք պաշտամունքային և աշխարհիկ կառույցներ. ավելի վաղ թվագրվող բազիլիկ եկեղեցին (այն ժամանակի ընթացքում բազմիցս փոխել է իր գործառնությունը և կրել է տարբեր փոխակերպումներ), փոքրիկ մատուռը,



Արուճի ամրոցի ընդհանուր տեսարանը՝ արևելքից: Առջևում՝ ամրոցի աշտարակները

Panoramica del *castrum* di Aruch, visto da est. In primo piano le torri aggettanti

իշխանական պալատի հանդիսասրահը, որը ճարտարապետական հորինվածքով բազմաթիվ նմանություններ ունի պատմական մայրաքաղաք Դվինի կաթողիկոսական պալատի հետ: Տաճարական համալիրում առաջին պեղաշրջանի ընթացքում բացված տարածքը, ելնելով կառույցների տիպից և հայտնաբերված նյութի առատությունից, խոսում է այդ տարածքի կենցաղային գործառույթի մասին: Հայտնաբերված հարուստ նյութն ուսումնասիրվում է և շուտով կհրապարակվի:

2022 թ. պեղաշրջանի ընթացքում իրականացվել է նաև Կաթողիկեի ֆոտոգրամետրիկ մանրամասն փաստագրումը, որտեղ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատերին փաստագրվել են ավելի քան 120 արձանագրություններ և գրաֆիտիսներ: Դրանք հետազոտության փուլում են և հետագայում կպատրաստվեն հրատարակության:

Պեղումներ Արուճի ամրոցում

20-րդ դարի 80-ականներին իրականացված պեղումների ժամանակ բացվել էր ամրոց-գորակայանի պարիսպների մեծ մասը: Ամրոց-գորակայանն ունի կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ: Պարսպապատերի լայնությունը 1,8 մ է: Շինությունը հյուսիս-հարավ առանցքով ձգվում է մոտ 100 մ, իսկ արևելք-արևմուտք առանցքով մոտ 120 մ՝ զբաղեցնելով մոտ 1 հա տարածք: Այդպիսի կառույցները նման են բյուզանդական «*castellum frontaliere*» մոդելին և կառուցվել են «Դիոկղետիանոսի ճանապարհի» (Strata Diocletiana) երկայնքով՝ ի պաշտպանություն «Արաբական սահմանի» (Limes arabicus): Դրանք հաճախ ունեն Արուճի ամրոցի չափերը, որոշ դեպքերում զբաղեցրել են 3 հա մակերես: Ինչ վերաբերում է Արուճի



Արուճի ամրոցի՝ 2022 թ. հնագիտական հետազոտությունների մեկնարկը ւնների սկիզբը
Inizio delle indagini archeologiche nel *castrum* di Aruch nel 2022

ամրոցին, ապա ենթադրվում է, որ այն կառուցվել է 4-րդ դ.: Զարգացած միջնադարում, հավանաբար 9-12-րդ դդ., գորակայանի հյուսիսարևմտյան հատվածում կառուցվել է ավելի փոքր քառանկյուն դղյակը՝ մոտ 35,00 × 35,00 մետր չափերով:



Արուճի ամրոցում 2022 թ. կատարված աշխատանքների ընթացքը
Lavori in corso nel *castrum* di Aruch durante la campagna di scavo del 2022



Հնավայրի ուսումնասիրության նախնական փուլը: Ետնախորքում հակասեյմիկ պատի մանրամասը

Prime ricognizioni sul sito. Sullo sfondo si veda il particolare del muro antisismico

Շինարարական տեխնիկայի տեսակետից՝ նշված դղյակի պատերը, առնվազն սկզբնական փուլում, շարված են եղել դեղնադարչնագույն տուֆով՝ 0,4-0,5 մ բարձրության բավական հավասար շարքերով: Այստեղ յուրաքանչյուր շարք ներքևից սկսած մի փոքր շեղվելով ստեղծում է աստիճանական թեքության ընդհանուր տպավորություն: Շինարարական տեխնիկայի այդ լուծումը հաճախ օգտագործվում էր նաև հարևան



2022 թ. պեղաշրջանի ավարտին ամրոցի ներսում հայտնաբերված մոնումենտալ կառույցի մի հատվածը

La struttura monumentale rinvenuta all'interno del castrum a fine della campagna di scavo del 2022

երկրներում, հատկապես հյուսիսային Սիրիայում 12-13-րդ դդ., որտեղ տեղական շինարարական ավանդույթները և գեղագիտական նկատառումները զուգակցվել են հիմքի կայունության ապահովման անհրաժեշտության հետ՝ դիմակայելու սեյսմիկ ակտիվության բարձր ռիսկին, հողի նստեցմանը, ջերմաստիճանի տատանումներին կամ առատ ու հաճախակի տեղումներին:

Հյուսիսային ճակատում պարսպի եզրագիծը ձգվելով մոտ 30 մ՝ ընդմիջվում է մոտ 6 մ դեպի վեր խոյացած, տարբեր փուլեր և վերականգնումներ ունեցող երկու պայտաձև աշտարակներով: Այդ կառույցներից պահպանվել է արևմտյան աշտարակի պատի շարվածքի միայն մի մասը, մինչդեռ արևելյան աշտարակը այժմ ժամանակակից տան մաս է կազմում: Կան նաև փոքր դռների հետքեր, որոնք տանում են դեպի այդ երկու կառույցները: Առայժմ հյուսիսարևմտյան անկյունում աշտարակների որևէ մնացորդ չի հայտնաբերվել: Վերջինս բացակայությունը կարող է մեկնաբանվել որպես տեխնիկական ընտրություն և բացատրվում է քարաժայռ ձորակի բնական ելուստով արդեն պաշտպանված լինելու փաստով: Մոտ 6 մ լայնությամբ սնամեջ աշտարակները փայտե առաստաղով բաժանված էին երկու հարկերի:

Արևելյան կողմը զբաղեցնում է մոտավորապես 15,00 × 10,00 մ չափերով մի կառույց, որն ուղղանկյուն է, ի հակադրություն հյուսիսային կողմի, որտեղ ուղղագիծ անցումը ավարտվում է կիսաշրջանաձև մասով՝ ձևավորելով յուրօրինակ գմբեթարդ: Մինչ օրս պահպանված այդ կառույցի մի մասը կառուցված է խնամքով շարված տարբեր երանգների սրբատաշ տուֆե մոտ 0,45-0,55 մ չափերով խորանարդաձև բլոկներով:

Շինության մուտքը բացակայում է, չնայած դրան այն ամբողջական է թվում և ստեղծում արտաքին պաշտպանիչ պատի տպավորություն. արևմտյան մասը կոպիտ մշակվածքով աստիճան է, որի թվագրությունը դժվար է որոշել: Շինության հիմնական մուտքը նույնպես գտնվում է արևելյան

մասում, որի տպավորիչ տեսքը հետաքրքիր կապ է ստեղծում այս եզակի միջավայրի հետ, որին միանում է շարվածքին բնորոշ նույն հատկանիշները կրող պատի մի փոքրիկ հատվածով: Նախկինում արված լուսանկարներով փաստագրվել է սրբատաշ մեծ քարից կառուցված մուտքի բարավորը, որը, ցավոք, փլուզվել է վերջին տասնամյակի սկզբին: Շքամուտքն ունի մոտ 2 մ բացվածք, անշուք է, առանց զարդերի: Հետագայում հիմնական մուտքի պաշտպանական կառուցվածքին ամրություն հաղորդելու համար կառուցվել է կիսագլանաձև ամուր աշտարակ, որը հենվում է վերևում նկարագրված արևելյան ճակատից ելնող, այսպես կոչված արտաքին պաշտպանական պատի վրա: Այդ կիսագլանաձև աշտարակի հարավային կողմի մի մասը անհայտ ժամանակաշրջանում մասամբ վերականգնվել է շատ անփույթ կերպով, գուցե անփորձ մասնագետների կողմից կամ էլ որոշակի կարիքների շտապ ապահովման համար:

Դղյակի արևելյան ճակատն ավարտվում է մուտքից մի փոքր հեռավորության վրա՝ հարավարևելյան անկյունը պաշտպանող զլանաձև աշտարակով: Նմանատիպ զլանաձև աշտարակ կա նաև դղյակի հարավ-արևմտյան անկյունում: Դղյակի հարավային ճակատի կառուցումը, ըստ ամենայնի, համընկնում է նրա ներքին հարավային ճակատի վերականգնման աշխատանքների որոշակի փուլի հետ: Համեմատական ուսումնասիրության հիման վրա առաջարկվել է առանձնացնել 12-րդ դ. վերջին դղյակի կիրառական նշանակության առնվազն մեկ փուլ: Ճարտարապետական նմանություններ են հայտնաբերվել ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Դաշտադեմի դղյակի հետ, որի կառուցումը, ըստ պահպանված արձանագրության, վերագրվում է Անիի՝ քրդական ծագում ունեցող Շադդադյանների դինաստիայի (1072-1199 թթ.) վերջին ամիրա Սուլթանին: Խոսքը կառույցների նմանությունների մասին է, որոնք սկսվում են քառանկյուն հատակագծով, ապա համալրվում նիստավոր և շրջանաձև



Տաճարական համալիրի տարածքում տեղադրված պեղավայրում բացված թոնիրը (աջից ներքևում)
Scavo di un *tonir* (in basso a destra) nel sondaggio dell'area ecclesiastica, campagna del 2022



Տաճարական համալիրի տարածքում բացված պեղավայրի տեսքը հարավարևելքից
Veduta aerea del sondaggio aperto davanti all'area ecclesiastica visto da sud-ovest

աշտարակներով: Համեմատություններ են արվել նաև Արուճից մոտ 40 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Մաղաբերդ փոքրիկ ամրոցի կլոր աշտարակների հետ, որոնք իրենց կիրառական նշանակությունը պահպանել են հետագա դարերում, հավանաբար 16-19-րդ դդ. օսմանա-պարսկական պատերազմներին ժամանակ:



Արուճի քարավանատունը
Il caravanserraglio di Aruch

2022 թ. հնագիտական աշխատանքները կենտրոնացած էին դոյակի ներսի հատվածում, որը ներկայացնում է աշխարհիկ շինության մի հատված՝ կառուցված հիմնաժայռի վրա և ունի մի քանի շերտագրական հորիզոններ: Այստեղ հայտնաբերված խեցեղենի և ուղեկցող նյութերի վերլուծության հիման վրա՝ առանձնացվել են տարբեր դարաշրջաններին բնորոշ նյութերով շերտեր՝ պատահականորեն այստեղ հայտնված վաղբրոնզեդարյան և երկաթեդարյան գտածոներ, և զարգացած միջնադարից մինչև նոր ժամանակի մշակութային շերտեր, որոնցից ամենավաղը, ըստ երևույթին, թվագրվում է 12-րդ դ.: Բացի ապակուց, խեցեղենի ու մետաղի առատ բեկորներից, այստեղ հայտնաբերվել են նաև սրբատաշ տուֆե բլոկներով շարված եռաշերտ պատեր, քարե սալահատակներ: Ուշագրավ է ճարտապետական տարր ներկայացնող խարիսխը, որը նման է Դաշտաղեմի հանդիսավոր սրահի խարսխին: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ուղղանկյուն սալաքարը, որի երկու կողմում քանդակված է նմանատիպ կենդանակերպ պատկեր: Անգլուխ չորքտանի մարմին պատկերող սալաքարն այժմ հետազոտության փուլում է և չի բացառվում, որ այն

կապված լինի
Բագրատունիների
զինանշանային (հերալդիկ)
խորհրդանիշի հետ:

Արուճի քարավանատուն

Ամրոցաշինության և ճանապարհային համակարգի ուսումնասիրությունը ներառում է նաև Մետաքսի ճանապարհի երթուղիների երկայնքով կառուցված (հատկապես 12-րդ դարից սկսած) ամենաբնորոշ շինություններից մեկի՝ քարավանատան քննությունը:

Այդ կառույցները ճանապարհորդների և վաճառականների համար նախատեսված համալիրներ էին, որոնք կառուցվում էին գլխավոր ճանապարհների երկայնքով: Մերձավոր Արևելքում լայն տարածում ստացած կառույցի այդ տեսակը կարող է ունենալ ճարտարապետական ամենատարբեր լուծումներ: Որպես կանոն, այն մեկ, բավական ընդարձակ մուտքով մեծ շինություն էր, որպեսզի ապահովեր կենդանիների (ուղտեր, էշեր, ձիեր) անխոչընդոտ մուտքը շինություն: Սովորաբար քարավանատան կենտրոնական դահլիճը նախատեսված էր կենդանիների համար (սննդի և խմելու խորշերով), իսկ կողային սրահներում տեղավորում էին ճանապարհորդներին և նրանց ուղեկիցներին:

Արուճի քարավանատունը թվագրվում է 12-13-րդ դդ. մեզ է հասել կիսավեր վիճակում, պահպանվել է միայն հյուսիս-արևելյան հատվածը: 1956-1957, 2008 թթ. պահպանված հատվածում իրականացվել են վերականգնողական աշխատանքներ: Արուճի քարավանատունը ընդհանուր գծեր ունի Անիի սահմանամերձ Ջրափիի քարավանատան և Վարդենյաց լեռնանցքի քարավանատան հետ, որը Վայոց ձորի մարզը կապում է Գեղարքունիքի

մարզին և ընդհանուր գծեր ունի
Դաշտադեմի մոտ գտնող
քարավանատան հետ:

Շարունակելով հետազոտական
աշխատանքը, անկասկած, հետաքրքիր
կլիներ վերլուծել այս համակարգերի
զարգացման և տարածման
փոխազդեցությունը Արուճում, իսկ ավելի
լայն իմաստով Մետաքսի ճանապարհի
հատվածներում՝ հաշվի առնելով
մասնավորապես մոնղոլների
տիրապետության դարաշրջանը:

Հրապարակումներ

Sergio Ferdinandi, *The Archaeological Mission of Aruch/Արուճ and the “Incastellamento” of the Silk Road: Preliminary Remarks*, in *East and West*, n.s. 3 (62), n. 1, June 2022, Rome, 21-70;

Sergio Ferdinandi, *I “Castella” dell’Armenia. Missione archeologica. Gli scavi promossi dall’ISMEO nei complessi fortificati e chiesastici medioevali delle località di Aruch e Shamiram, poste lungo l’antica Via della Seta*, in *Il Sole 24 Ore*, Domenica, 30 ottobre 2022, n. 299, XI;



Արուճի հնագիտական համալիրի ընդհանուր տեսքը
Veduta generale dell’intero complesso di Aruch

Sergio Ferdinandi, *Note sull’incastellamento dell’Armenia medievale*, in *Atti delle Giornate di archeologia, arte e storia del Vicino e Medio Oriente*, Milano, 20-22 ottobre 2022, a cura della Fondazione Terra Santa, (in corso di stampa).

Համատեղ հնագիտական պեղումներ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ մարզի

ՇԱՄԻՐԱՄ հնավայրում



Շամիրամ հնավայրի համայնապատկերը
Vista panoramica del sito di Shamiram

Արուճի պեղումներին զուգահեռ աշխատանքներ են տարվել նաև Շամիրամի ամրոց-բնակատեղիում: Հետազոտական նախագծի նպատակն է ուսումնասիրել Շամիրամի հնագիտական համալիրը, որը գտնվում է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղում, Արուճից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Շամիրամն ընտրվել է այստեղ կարևոր նշանակո-

ւթյուն ունեցող հնագիտական մնացորդների առկայության պատճառով՝ կառուցվել է վաղ երկաթի դարում, ավերվել ուրարտական արշավանքների ժամանակ և վերաօգտագործվել անտիկ շրջանում: Բացի այդ այն առանցքային վայր է, որտեղ կարելի է իրականացնել հետազոտական նախագիծ և մեկ ծրագրի շուրջ համախմբել Հայաստանում գործող հնագիտական

խմբերին: Տեղանքի անունը կապված է Ասորեստանի հայտնի թագուհի Շամիրամի անվան հետ, ով, ըստ հայկական ավանդույթի, սիրահարվել է հայոց արքա Արամի որդի Արա Գեղեցիկին:

2022 թ. իրականացված աշխատանքը կենտրոնացած էր ամրոցի հետազոտման և հուշարձանի ամբողջ տարածքի օդային լուսանկարահանման վրա, որի վերջնական նպատակն էր ստեղծել ամբողջ համալիրի նոր քարտեզագրական փաստաթուղթ: Ամրոցում իրականացվել են նաև ստուգողական պեղումներ: Հուշարձանի ուսումնասիրությունը և փաստաթղթավորումը կշարունակվեն նաև 2023 թ. ամռանը: Տեղանքը, ընդհանուր առմամբ, զբաղեցնում է ավելի քան 30 հա: Այն վաղ երկաթի դարի պարսպապատ հսկայական բնակավայր է, որի մի հատվածը կառուցապատվել է նաև անտիկ շրջանում: Գտնվում է երկու գետերի խաչմերուկում ձևավորված հրվանդանի վրա: Բնակավայրից դուրս՝ հարավային հատվածում մի քանի հեկտար տարածքի վրա, ձգվում է վաղ երկաթի դարի դամբարանադաշտը: Նախկինում արված պեղումները հաստատել են հնավայրի գոյությունը նախաուրարտական շրջանում, արձանագրվել է հնավայրի ավերումը ուրարտացիների կողմից մ.թ.ա. 8-րդ դարում: 2022 թ. ամռանը իրականացված պեղումները զգալի ներդրում են ունեցել այս կարևոր կենտրոնի կյանքի վերակառուցման գործում: Այստեղ՝ նախապատմական պարիսպներից մեկի ներսում պեղված հատվածում, հայտնաբերվել են միջին երկաթի դարաշրջանով թվագրվող խեցեղեն,



2022 թ. Շամիրամ հնավայրում բացված հետախուզական փոսորակը: Ներկայացնում է հորը և քարե սալերի վրա անասուններին կապելու համար արված անցքերը

Il sondaggio del 2022 nel sito di Shamiram. Si distinguono un *silos* e una pietra forata per legare il bestiame


որը համապատասխանում է Հայաստանի տարածքում ուրարտացիների ներկայության ժամանակաշրջանի հետ և կարմիր փայլեցված շատ բարձր որակի խեցեղենի որոշ բեկորներ, որոնք ուրարտական թագավորական իշխանության բնորոշ տարրերից են:

Ուշ երկաթի դարաշրջանի խեցեղենի որոշ բեկորներ վկայում են հնավայրի շարունակական օգտագործման մասին նույնիսկ աքեմենյան ժամանակաշրջանում: 2022 թ. սկսված և 2023 թ. շարունակվող աշխատանքների ընթացքում նախատեսվում է պատի բոլոր շարքերի մանրամասն ուսումնասիրություն՝ դրանց ժամանակագրական հաջորդականությունը որոշելու համար:

«ՎԱՅՈՑ ՁՈՐ» նախագիծ (2016-2022 թթ.): ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ

ԵՎ ՊԵՂՈՒՄՆԵՐ

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի հարավում, նշանավորվում է իր գեղեցկությամբ և հնագիտական հարուստ ժառանգությամբ: Այստեղ 2016 թ. հայկական (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ և Արենի-1 քարայր գիտահետազոտական հիմնադրամ) և իտալական (ISMEO) հնագիտական



Աղավաճորի դամբարանից հայտնաբերված
ուրարտական պալատական դասական կարմրափայլ
խեցեղենը

La tradizionale ceramica palatina urartea di color cremisi
rinvenuta nella sepoltura di Aghavnadzor

արշավախումբը Իտալիայի Արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարարության աջակցությամբ և համաֆինանսավորմամբ աշխատում է՝ փաստագրելով և արժևորելով Վայոց ձորի մարզի հնագիտական ժառանգությունը: Անցկացվող հետազոտական աշխատանքները և պեղումները փաստում են այստեղ գտնվող մեծաքանակ հնագիտական նյութի առկայության մասին, որոնք ժամանակագրական առումով կարող են թվագրվել ստորին պալեոլիթից մինչև միջնադար ընկած ժամանակահատվածով: 12-14-րդ դդ. Վայոց ձորը (բառացի՝ «Ողբի ձոր») եղել է տարածաշրջանի միջնադարյան կյանքի կենտրոններից մեկը և այսպես կոչված Մետաքսի ճանապարհով անցնող ճանապարհորդների և առևտրականների առանցքային խաչմերուկը: Վայոց ձորը շատ հստակ աշխարհագրություն ունեցող տարածաշրջան է, որը բնութագրվում է հյուսիսից հարավ ձգվող երեք լեռնաշղթաներով՝ Վարդենիսի, Արփայի և Վայքի: Ամենաբարձր կետը Վարդենիսի լեռն է, ունի 3522 մ բարձրություն, իսկ ամենացածր կետը Արփայի հովիտն է, որը գտնվում է մոտ 850 մ բարձրության վրա: Վայոց ձորը հարուստ է ջրային ռեսուրսներով և աղբյուրներով, այդ թվում՝ հանքային ջրերով: Տարածաշրջանի հիմնական ջրային երակը Արփա գետն է, որը երկարությունը կազմում է ավելի քան 90 կմ, որի հունը հազարամյակների ընթացքում վերածվել է կիրճի՝ հատկապես Արենի գյուղի մոտակայքում: Արփայի հիմնական վտակը Եղեգիս գետն է, որի հովիտը կազմում է Մետաքսի ճանապարհի հատվածներից մեկը, և որի հունը Վարդենիսի լեռներով դեպի Սևանա լճի հարավային ափ տանող հիմնական

ճանապարհի մի մասն է: Այս ճանապարհի երկայնքով Վարդենյաց կամ Սելիմի լեռնանցքում (ծովի մակարդակից 2410 մ), Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերի սահմանին է գտնվում 1332 թ. իշխան Չեսար Օրբելյանի կառուցած հայտնի քարավանատունը, որը միջնադարյան քարավանատան լավագույն պահպանված օրինակն է Հայաստանում:

2016 թ. հնագիտական արշավախումբը համակարգված հետազոտություն և պեղումներ է իրականացրել՝ նպատակ ունենալով ստեղծել շրջանի հնագիտական ժառանգության համապարփակ քարտեզ: Արշավախմբի նպատակն է իրականացնել վաղպատմական և նախապատմական ժամանակներում մարդկային համայնքների ուսումնասիրություն, հասկանալ, թե ինչ ազդեցություն է ունեցել մ.թ.ա. 9-7-րդ դդ. Ուրարտու պետության տիրապետության հաստատումը այդ տարածքներում, հասկանալ նյութական ինչպիսի արտադրություն է եղել Աքեմենյաններից մինչև ուշ անտիկ



Եղեգնաձորի դամբարանադաշտում գտնվող ուրարտական թաղումից հայտնաբերված կնիքը
Sigillo rinvenuto in un "deposito" nell'area urbana di Yeghegnadzor

Ժամանակակից Արենի գյուղում գտնվող դամբարանից հայտնաբերված Հռոմեական շրջանի ոսկյա մատանին
Anello d'oro di epoca romana rinvenuto in una tomba sotto il moderno villaggio di Areni



Ժամանակաշրջանը (պարթևներ/հռոմեացիներ և Սասանյաններ), փաստագրել միջնադարյան ամրոցների, վանքերի և բնակավայրերի մնացորդները: Տարածքի հետազոտության և արբանյակային քարտեզների ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են հարյուրավոր հնա վայրեր, որոնցից ութսունը մանրամասն ուսումնասիրվել են՝ վերգետնյա նյութի հավաքագրման և անօդաչու սարքով արված օդային լուսանկարների օգնությամբ իրականացված մանրամասն քարտեզների կազմման միջոցով: Այս հնավայրերից մի քանիսը պեղվել են, որպեսզի պարզվեն դրանց շերտագրական հաջորդականությունը: Որոշ դեպքերում բացվել են փոքր փոստրակներ (Քյոշկ), իսկ մյուսները լայնածավալ պեղումների առարկա են դարձել (դրանց մի մասը դեռ ընթացքի մեջ է (Արենի-1, Արենի-2, Գնիշիկաձոր, Տիգրանաշեն-1, Մոխրոտ-1, Ելիին-1):

Վայոց ձորի մարզը կարևոր դեր է խաղացել նաև պատմական ամենավաղ շրջանում, երբ այս տարածքները եղել են Ուրարտու պետության անբաժանելի մասը՝ մ.թ.ա. 9-7-րդ դդ.:



Տեսարան Գնիշիկի կիրճից
Veduta aerea della Valle di Gnishik

Արշավախմբի աշխատանքի ընթացքում հայտնաբերվել և ուսումնասիրվել են այս դարաշրջանին պատկանող ուշագրավ մնացորդներ: Ելփին-1 հնավայրում հայտնաբերվել է մանրակրկիտ պեղված բազմաշերտ դամբարան, որտեղ կա ուրարտական փուլին բնորոշ ժայռափոր կառույց: Այս տարածաշրջանում Ուրարտուի առկայության կարևոր վկայությունն են Գետափ-1 ամրոցը և Քյոշկի ամրոցը, որը հավանաբար Ուրարտուի կառավարման կենտրոնն էր այդ տարածքում և որտեղ ճարտարապետությունը և ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված խեցեղենը թույլ են տվել սահմանել դրա ժամանակագրությունը: Ուրարտական փուլին հաջորդող՝ աքեմենյանից մինչև ուշ անտիկ ժամանակաշրջաններին վերաբերվող գտածոները հնագիտական տեսանկյունից առանձնապես սակավ են: Այս հանգամանքը վկայում է տեղական զարգացման հետագծի մասին, որտեղ գրեթե ոչ մի ապացույց չկա այս տարածքներում գերիշխող կայսրությունների միջամտության մասին: Սակայն այս առումով ուշագրավ բացառություն է ժամանակակից Արենի

գյուղի տարածքից հունարեն գրված և մ.թ. 2-րդ դարով թվագրվող զոհասեղանի հայտնաբերումը:

Հայ-իտալական համատեղ արշավախմբի կողմից մշակված նախաձեռնությունների շարքում միջնադարյան նշանակալից ժառանգության փաստագրումն ու ուսումնասիրությունը կարևոր տեղ է զբաղեցնում: Վայոց ձորը, որով կապվում և որտեղ հատվում են միջազգային երթուղիները (որոնցից Մետաքսի ճանապարհն է միայն ամենահայտնին), հատկապես 10-15-րդ դդ. բնութագրվում է

մի շարք ֆեոդալական տոհմերի առկայությամբ, ինչպիսիք են հայտնի Օրբելյանների տոհմը, որը թողել է զգալի հնագիտական վկայություններ:

Վայոց ձորը հարուստ է ամրոցներով (Սմբատաբերդ, Էրթեչ, Պոռշաբերդ), գյուղական բնակավայրերով (Գնիշիկաձոր), եկեղեցիներով, վեհաշուք վանքերով և խաչքարերի ընդարձակ գերեզմանոցներով: Հետազոտված և փաստագրված վայրերից են կրոնական



Արենի-1 քարայրի օդալուսանկարը
Veduta aerea dell'ingresso alla grotta di Areni

ճարտարապետության ակնառու օրինակները՝ Նորավանք վանական համալիրը, որը Օրբելյանների ընտանիքի հոգևոր կենտրոնն էր, և որտեղ էլ գտնվում է նշանավոր ճարտարապետ Մոմիկի նախագծած հայտնի Սուրբ Աստվածածին եկեղեցին, նաև Արենիի համանուն եկեղեցին: Նորավանքը գտնվում է Արփա գետի վտակ Գնիշիկ գետի հովտում: Այն արտասովոր հնագիտական ու գեղատեսիլ ներուժ ունեցող տարածք է, որտեղ գտնվում է նաև միջնադարյան Ամաղու գյուղը և որտեղից հայտնաբերվել են սասանյան մետաղադրամներ:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի (ISMEO)-ի համատեղ հնագիտական պեղումները Վայոց ձոր ծրագրի շրջանակում

Արենի-1 (VDP 027 - պալեոլիթ, նեոլիթ, ուշ էնեոլիթ, միջին բրոնզի դար, երկաթի դար, ուշ անտիկ շրջան, միջնադար)

Վայոց ձորում իրականացված աշխատանքները կենտրոնացված են Արփա գետի հովտում, որտեղ գտնվում է զարմանահրաշ Արենի-1 կամ Թոչունների կարստային քարայրը: 2007 թվականին սկսված և դեռ ընթացքի մեջ գտնվող հետազոտություններն ու պեղումները հանգեցրել են յուրահատուկ հնագիտական համատեքստի բացահայտմանը: Քարանձավի կայուն միկրոկլիման նպաստել է օրգանական նյութերի պահպանմանը: Պեղումներով հայտնաբերել են կարևոր հնագիտական՝ միջնադարյան (մ.թ. 12-14 դդ.), նախապատմական՝ մ.թ.ա. 6-րդ և 4-րդ հազարամյակների շերտեր, որոնցից կարելի է առանձնացնել ուշ էնեոլիթի և վաղ բրոնզի դարի կարևոր անցումային փուլը: Հայտնաբերվել են բազմաթիվ գտածոներ և իրավիճակներ, որոնցից

Արենի-1 քարայրի ուշ էնեոլիթյան շերտից հայտնաբերված կաշվե կոշիկը (մ.թ.ա. 4300-3500 թթ.)
Una scarpa in pelle rinvenuta nella grotta di Areni da strati del Tardo Calcolitico (c. 4300-3500 a.C.)



ամենահետաքրքրականը գինու պատրաստման և պահպանման համար նախատեսված հնձանային համալիրն է: Տասնյակ կենսաչափական վերլուծությունները և ռադիոմետրիկ թվագրությունները հաստատել են, որ Արենի-1-ում գինու արտադրությունը վերագրվում է մոտ մ.թ.ա 4200 թ.: Համապարփակ քիմիական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Արենի գինին լոկ խաղողից ստացված հասարակ ըմպելիք չէ, այլ իրական գինի, որն անցել է խմորման գործընթացներ: Այս առումով հատկապես կարևոր էր խեցեղենի որոշ բեկորներում գինուն կարմիր գույն տվող պիգմենտի՝ անտոցիանինի առկայության բացահայտումը: 1-ին պեղավայրում հայտնաբերված մնացորդները ցույց են տալիս, որ կենտրոնական սրահի հետնամասը հիմնականում օգտագործվել է ոչ միայն գինու արտադրության,



Արենի-1 քարայրի ուշ էնեոլիթյան շերտում հայտնաբերված գունազարդ անոթ (մ.թ.ա. 4300-3500 թթ.)

Giaretta dipinta rinvenuta in situ nella grotta di Areni da strati del Tardo Calcolitico (c. 4300-3500 a.C.)

այլև ծիսական նպատակներով: Այստեղ ամենաուշագրավ պահերից մեկը, անկասկած, կապված է գինու արտադրությանը առնչվող կավե տարաների մեջ երեք դեռահասների գանգերի հայտնաբերման հետ, ինչը հուշում է, այն մասին, որ գինեգործությունը կրել է ծիսական բնույթ: Արենիում հայտնաբերվել է նաև ուշ էնեոլիթից վաղ բրոնզի դար անցումային շրջանի խեցեղեն, որը բնութագրվում է ձևաբանական և ծավալային այնպիսի առանձնահատկություններով, որոնք նախորդել են հետագա խեցեգործական արտադրության մեջ կիրառվող տարրերին: Արենիի խեցեղենը, որը սահմանվում է որպես «պրոտո կուր-արաքսյան», ցույց է տալիս, որ այս տարածքը եղել է կուր-արաքսյան մշակույթի՝

տարածաշրջանային նախապատմության առաջին մշակույթի տարածման կենտրոններից մեկը:

Արենի-2 քարայր (VDP 028 - պալեոլիթ, նեոլիթ, ուշ էնեոլիթ, ուշ բրոնզի դար, միջնադար)

Արենի-1 քարայրի դիմաց գտնվում է Արենի-2 քարայրը: Այն կարստային քարայր է, որը պեղվում է դեռ 2007 թ., համեմատաբար փոքր է և բաղկացած է մոտ 1,5 մ լայնություն և 14 մ երկարություն ունեցող մեկ ներքին սրահից: Այս փոքրիկ քարայրը հատկապես հետաքրքիր է նրանով, որ այստեղ են գտնվում տարածաշրջանի երբևէ հայտնաբերված ամենահին հնագիտական գտածոները, որոնք թվագրվում են ստորին պալեոլիթով (մեզանից մոտ 1,8 միլիոն



Ելփինի ժայռի համայնապատկերը
Vista panoramica della rupe di Yelgin

տարի առաջ), հայտնաբերվել են նաև նեոլիթյան շրջանի կարևոր գտածոներ: Այս ժամանակաշրջանին վերաբերվող գտածոները հնարավորություն են տվել այս միջավայրը որակել որպես հնարավոր ծիսական տարածք, որը, ըստ հետազոտության ներկա վիճակի, նույնիսկ ավելի հին է, քան Արենի-1 քարանձավը:

Տիգրանաշեն (ՎՁԾ 053 - պալեոլիթ, միջին բրոնզի դար)

Տիգրանաշեն հնավայրը, որպես միջին բրոնզի եզակի բնակատեղի, ընդգրկվել է հնագիտական աշխատանքներում, չնայած գտնվում է Արարատի մարզում: Այստեղ մակերևույթների հետազոտության արդյունքում հայտնաբերվել են կառույցներ: Պեղումներից հայտնաբերված գտածոները հիմնականում խեցեեկերներ են: Չորս տարի իրականացվող պեղումները, որոնք դեռ ընթացքի մեջ են, հանգեցրեցին մի փոքրիկ բնակավայրի բացահայտման, որը թվագրվում է միջին բրոնզի դարով: Միջին բրոնզի դարում մեզ հայտնի բնակավայրերի սահմանափակ քանակի առկայության պայմաններում, այս բնակատեղիի ուսումնասիրությունը հատկապես կարևոր է, քանի որ այն լույս է սփռում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի համայնքների բնակեցման դինամիկայի վրա, որոնք, ինչպես գիտական հանրությունն է պնդում, հավատարիմ էին քոչվոր հովվական կենսաձևին և շարժուն ապրելակերպին: Պեղումները ցույց են տալիս, որ այստեղ տարածքի հետ առկա է եղել սերտ կապ, որից կարելի է ենթադրել, որ զբաղվել են անասնաբուծությամբ: Դա կապված է եղել ավելի կայուն բնակավայրերի հետ, որոնք բնութագրվում են ճարտարապետական համակարգերով և որակյալ խեցեղենի արտադրությամբ:



Ելփինի ժայռի ստորոտում իրականացված պեղումները
Scavi ai piedi della rupe di Yelpin

Ելփին (VDP 004 - Վաղ, միջին և ուշ բրոնզի դար, վաղ, միջին և ուշ երկաթի դար, դասական դարաշրջան, միջնադար)

Հնավայրը գտնվում է Արփայի հովտում, ներառում է կրաքարե ժայռը և նրա շրջակայքը, որտեղ առկա են Ուրարտական թագավորության ժամանակաշրջանով թվագրվող քարե շինություններից պահպանված մնացորդներ՝ ժայռափոր խուց, հարթակ, աստիճան: Ժայռի հարավային ստորոտում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են հնագիտական գտածոներ, որոնք թվագրվում են վաղ բրոնզի դարից մինչև միջնադար: Ամբողջ նախապատմական ժամանակաշրջանում ժայռի շուրջը իրականացվել են բազմաթիվ թաղումներ, որոնք իրականացվել են տարբեր փուլերում:

Քյոշկ (VDP 026 - Միջին և ուշ երկաթի դար, դասական դարաշրջան, միջնադար)

Եղեգնաձորի քաղաքային միջավայրում, բլրի վրա է գտնվում Քյոշկ ամրոցը: Տեղանքը

ուրարտացիների կողմից կառուցվել է որպես ռազմական հենակետ և շահագործվել հետագա բոլոր փուլերում մինչև միջնադար: Պահպանվել են ամրոցի մնացորդներ, որոնց բարձրությունը տեղ-տեղ գերազանցում է չորս մետրը: Հնագիտական պեղումները հաստատել են, որ կառույցի հիմքերը նախնական հատակագծում ունեն ուրարտական հիմքեր, որ հետագայում վերաօգտագործվել են Երվանդունիների ժամանակաշրջանում: Հնավայրը հայտնի է նաև Ավարայրի ճակատամարտի համատեքստում՝ Վայոց ձորով դեպի Արցախ նահանջող հայկական զորաջոկատների և Սասանյան կայսրության բանակի միջև տեղի ունեցած բախումների կապակցությամբ:

Մոխրոտ (VDP 010 - Հին բրոնզի դար, ուշ երկաթի դար, միջնադար)

Հնավայրում վաղ բրոնզի դարաշրջանի կուր-արաքայան մշակույթին պատկանող խեցեղենի հայտնաբերումից հետո, արշավախումբը իր հետազոտական աշխատանքը սկսեց իրականացնել Արփա գետի հնավտակի հովտում գտնվող Մոխրոտ հնավայրում: Պեղումների արդյունքում հայտնաբերվել են առատ խեցեղենով և չոր շարվածքով կառույցներ, որոնք վնասվել են խոշոր փլուզման արդյունքում: Հնարավոր եղավ պարզել, որ, նախապատմական նյութի մեծ մասը գտնվում էր երկրորդական շերտում, մինչդեռ հայտնաբերված կառույցները պատկանում են ուշ երկաթի դարին, հետևաբար՝ պատմական ժամանակաշրջանին և

տարածաշրջանում ուրարտական տիրապետությանը հաջորդող փուլին:

Գնիշիկաձոր (ՎՁՆ 029 – Էնեոլիթ, միջին բրոնզի դար, միջնադար)

Գնիշիկաձորի հնագիտական համալիրը գտնվում է Գնիշիկի հովտի կենտրոնական մասում մի յուրօրինակ էկոխորշում՝ խաղողի, այդ թվում՝ վայրի խաղողի առկայությամբ լանդշաֆտում: Արշավախմբի կողմից իրականացված պեղումների շնորհիվ ցույց են տալիս այս հնավայրի կարևորությունը՝ որպես 13-14-րդ դդ. Նորավանքի տարածքի վերահսկման և շահագործման համակարգի մաս: Նրա գործառնությունը, անկասկած, կապված էր գինու արտադրության և պահպանման հետ՝ մի գործունեություն, որը բնորոշ է Վայոց ձորի մարզին հնագույն ժամանակներից և մինչ օրս հանդիսանում է այս ծաղկուն մարզի հիմնական տնտեսական գործունեությունը:



Գնիշիկաձորի հնագիտական համալիրի օդայուսանկարը
Veduta dall'alto del sito di Gnishikadzor

ԿՈՏԱՅՔԻ հետազոտական նախագիծ (2013-2022)

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ աշխատանքներ և ՊԵՂՈՒՄՆԵՐ

Կոտայքի մարզը կենտրոնական դիրք է զբաղեցնում Հայաստանի Հանրապետության տարածքում և մեծ հետաքրքրություն ներկայացնում ինչպես բնական լանդշաֆտի, այնպես էլ պամամշակութային ժառանգության տեսանկյունից: Մարզի լանդշաֆտը, որը հիմնականում ձևավորված է հանգած հրաբուխներով՝ ինչպիսիք են Հատիսը և Գոյթանասարը, շրջապատված է բարձր լեռնաշղթաներով և հատվում է Արաքսի վտակ Հրազդանի հովտով: Տարածաշրջանը առատ է օգտակար հանածոներով, որոնք կենտրոնացած են հիմնականում Հրազդան գետի վտակ Մարմարիկ գետի հովտում, դրանց թվում են նախապատմական ժամանակներից ի վեր շահագործված ոսկու բազմաթիվ հանքավայրերը:

Կոտայքի հետազոտական նախագիծը մեկնարկել է 2013 թվականին: Այն նպատակ ունի ուսումնասիրել դեռևս համակարգված հետազոտության չենթարկված այս տարածքը, որտեղ հարուստ հնագիտական ժառանգությունը ուսումնասիրության կարիք ունի: 2013-2022 թթ. Կոտայքում իրականացված աշխատանքների շրջանակներում բացահայտվել և ուսումնասիրվել են 227 հնավայրեր, որոնց մեծ մասը նախկինում ուսումնասիրված չի եղել: Նշված հնավայրերը հիմնականում գտնվում են Հրազդան և Մարմարիկ գետերի մոտ, սակայն բազմաթիվ հնավայրեր տեղակայված են դժվարամատչելի սարահարթերում: Նախապատմական

ժամանակաշրջանից մինչև ուրարտական ժամանակաշրջանը ընգրկող հնավայրերի մեծ մասը իրենցից ներկայացնում է մեգալիթյան ամրոցային համալիրներ և դամբարանադաշտեր: Պաշտպանական նշանակության հնավայրերը հաճախ պարսպապատ բնակավայրեր են, որոնք գտնվում են ռազմական հիմնական ուղիներից հեռու վայրերում, սակայն որոշ պաշտպանական կառույցներ, որոնք ամենայն հավանականությամբ ամրոց – թաքստոցներ են ծառայել, կառուցվել են բարձր բլուրների գագաթին, խիստ պաշտպանված, բայց դժվարանցանելի վայրերում, որոնք հաճախ անբարենպաստ էին ապրելու համար: Բոլոր ժամանակներում վիթխարի ամրոցային, հաճախ մեգալիթյան, համալիրներ կառուցելու



Սոլակ-1 հնավայրի օդայուսանկարը
Veduta aerea del sito urarteo di Solak-1



Սոլակ գյուղի համայնքի ներկայացուցիչների
այցը հնավայր

Visita di una scolaresca dall'omonimo moderno
villaggio al sito di Solak-1

անհրաժեշտությունը, վկայում է նախապատմական
վաղ փուլերից ի վեր տեղական
հակամարտությունների բարձր մակարդակի
առկայության, ինչպես նաև այդ տարածքները
ռազմատենչ ցեղերի հարձակումներից լրացուցիչ
պաշտպանության անհրաժեշտության մասին: Այս
խմաստով խորհրդանշական են մի շարք տպավորիչ
ամրոցներ, որոնք կառուցվել են առանձնապես
մեկուսացված վայրերում, որոնք տեղակայված են



Ա և Բ շինությունների օդայուսանկարը
Ripresa aerea dell'Edificio A e dell'Edificio B
sulla sommità di Solak-1

լավայի հոսքերի վրա և կառուցված նույն
հրաբխային ապարներով ապահովելու համար
ամրացված համալիրների գրեթե ամբողջական
անտեսանելիությունը: Ուրարտական փուլում
տարածաշրջանն առաջին անգամ թևակոխում է
պատմական դարաշրջան: Կոտայքում
ուրարտական հուշարձանները թեև շատ չեն
(Սոլակ-1, Արամուս, Դովրի), սակայն արժեքավոր
են: Դրանք պաշտպանական մեծ կենտրոններ էին,
որոնք ծառայում էին և՛ որպես ամրացված
բնակավայրեր, որոնք միջանկյալ դիրք էին
գրադեցնում Արարատյան գոգավորություն մուտքը
պաշտպանելու համար, և՛ որպես
հաղորդակցության հիմնական ուղիներ: Նշված
բնակատեղիները նաև կարևոր գյուղատնտեսական
կենտրոններ էին, իրենց վերահսկողության տակ
գտնվող տարածքների կազմակերպմամբ ու
շահագործմամբ: Ուրարտուի ազդեցությունը
ակնհայտ է նույնիսկ նրա քաղաքական և
ռազմական հզորության անկումից հետո,
ուրարտական բոլոր խոշոր կենտրոնները, իրենց
ճարտարապետության կարևորությամբ և դիրքի
ռազմավարական բնույթով, վերօգտագործվել են
ինչպես Աքեմենյան դարաշրջանում, այնպես էլ
հետագա ժամանակաշրջաններում, առնվազն
մինչև ուշ անտիկ դարաշրջան, ինչը վկայում է
Հայկական լեռնաշխարհում բնակավայրերի և
մշակութային կյանքի արտասովոր
շարունակականության մասին: Միջնադարը
Կոտայքի մարզում, ներկայացնում է բազմաթիվ
հնավայրերով ներկայացված պատմական փուլ:
Այստեղ յուրաքանչյուր էկոլոգիական խորշ և
նախկինում գոյություն ունեցող յուրաքանչյուր
հնավայր այս կամ այն չափով բնակեցված է եղել և
շահագործվել է: Այս առումով ուշագրավ է վերջին
տարիներին այս հնավայրերում ի հայտ եկած
դինամիկան, որպես օրինակ բերենք Մարմարիկ
գետի հովիտը, որտեղ հայտնաբերվել են
նախապատմական բարձրադիր ամրոցներ և
դամբարանադաշտեր, մինչդեռ բնակավայրեր չեն
հայտնաբերվել: Վերջիններս կարելի է գտնել

միջնադարյան բնակավայրերի տակ, որոնք հետագայում դարձան տարածաշրջանի ժամանակակից գյուղերը, ինչն էլ արտասովոր շարունակականության հերթական վկայությունն է: Տասը տարվա հետազոտական գործունեության ընթացքում ուսումնասիրված առարկաները բազմաթիվ հարցեր են առաջ քաշել և միննույն ժամանակ թույլ տվել նոր հայացք նետել տարածաշրջանային հնագիտությանը, հատկապես նախապատմական հնագիտությանը հուզող բազմաթիվ խնդիրների վրա: Դիտարկենք, օրինակ, նախապատմական հասարակությունների ամրոցաշինության և ռազմականացման գործընթացների սկզբնավորման և միջին բրոնզի դարաշրջանի համայնքների ենթադրյալ քոչվորության հարցը: Փորձելով պատասխանել այս և այլ հարցերին, հետազոտական աշխատանքների ընթացքում բացահայտված որոշ հնավայրեր պեղվել են, որպեսզի ի հայտ բերվեն դրանց առանձնահատկությունն ու թվագրումը: Խոսքը, մասնավորապես, Սոլակ-1 բացօթյա կայանի, Բերդի-դար, Թդիթ, Քաղսի-2 և Մեղրաձորի ամրոց հնավայրերի մասին է: Հնագիտական արշավախմբի ամենակարևոր ձեռքբերումը անկասկած վերաբերում է Սոլակ-1/Վարսակ հնավայրի հայտնաբերմանն ու ծավալուն ուսումնասիրությանը, որը բացահայտվել է կանխատեսելի հնագիտական մոդելի մշակման միջոցով, որն էլ 2019 թվականին «հետազոտություն» անվանակարգում արժանացել է հեղինակավոր Եվրոպա Նոստրա / Եվրոպական ժառանգություն (Europa Nostra Awards/European Heritage Awards) մրցանակին: 2022 թվականին մեկնարկել է նաև բազմամյա ծրագիր՝ Մարմարիկի հովտում գտնվող Զրառատի հայտնի դամբարանադաշտի հետազոտման նպատակով:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ի և Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի (ISMEO) համատեղ հնագիտական



Սոլակ-1 հնավայրի պալատական շինության ընդհանուր տեսքը: Ետնախորքում՝ Գութանասար հրաբուխը
Veduta da nord dell'Edificio A del sito di Solak-1 con il vulcano Guthanasar sullo sfondo

պեղումները Կոտայքի հետախուզական ծրագրի (Kotayk Survey Project) շրջանակում


Սոլակ-1 (KSP 016– Միջին Պալեոլիթ, Նեոլիթ, Երկաթի դարաշրջան՝ վաղ, միջին և ուշ, Միջնադար)

Սոլակ-1/Վարսակ յուրօրինակ հնագիտական գտածոներով հնավայր է, որը զբաղեցնում է 32 հեկտար: Հայտնաբերված առարկաների ժամանակագրությունը ընդգրկում է միջին հին քարե դարից մինչև միջնադարյան ժամանակաշրջանը, այն կարելի է համարել ոչ միայն Կոտայքի մարզի, այլ ամբողջ Հայաստանի կարևոր հնավայրերից մեկը: Հետախուզական փոստրակների միջոցով ուսումնասիրվել են հնավայրի տարբեր հատվածները, որոշելու համար ժամանակագրությունը, մասնավորապես լայնորեն ուսումնասիրվել է մ.թ.ա. VIII դարի թվագրվող ամրացված շինությունը (Շինություն Ա), որը կառուցել են ուրարտական թագավորները Հրազդան գետի հովիտը հսկելու համար: Սոլակ-1 հնավայրը բնակեցված է եղել երկաթի դարաշրջանում մ.թ.ա. X և VII դարերի միջև: Արգիշտի I թագավորի օրոք՝ մ.թ.ա. VIII դարում ուրարտացիները գրավել են բնակավայրը: Այս հանգամանքը համընկնում է տարածքում արդեն հայտնի տվյալների հետ, որոնց համաձայն հենց



Ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի գլխավորությամբ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ պատվիրակության այցը Սոլակ-1 հնավայր (2016 թ. օգոստոսի 5)

Visita di una delegazione dello IAE NAS RA al sito di Solak-1 alla presenza del precedente Direttore dell'Istituto Pavel Avetisyan



Շինություն Ա-ի հատակագիծը
Planimetria dell'Edificio A di Solak-1

այդ թագավորն է սկսում Հրազդան հովտի նվաճումը, որը կապում է Արարատյան սարահարթը Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափի հետ: Այն, որ վաղ երկաթի դարաշրջանում հենց ուրարտացիներն են ոչնչացրել բնակավայրը, վկայում են պեղումների ժամանակ վաղ երկաթի դարաշրջանի ամրացված շինության (Շինություն Բ), պատերի պարագծով հայտնաբերված ուրարտական նետերի ծայրերը: Համաձայն ներկայումս առկա տվյալների կարելի է եզրակացնել, որ բնակավայրը չի օգտագործվել, սակայն ուրարտացիները կառուցել են ամրացված նոր համալիր (Շինություն Ա), իսկ նախաուրարտական շրջանի Շինություն Բ-ն մասամբ են վերաօգտագործել: Ուրարտական շրջանի շինությունները հետագայում չեն ոչնչացվել (ինչպես վկայում է Շինություն Ա-ի ներսում համապատասխան նյութի բացակայությունը և հրդեհված շերտի առկայությունը), այլ դրանք լքվել են մոտ մ.թ.ա. VII դարում, հավանաբար, հյուսիսից քոչվոր ցեղերի առաջնադաշնան հետ կապված: Շինություններ Ա-ն և Բ-ն կարճ ժամանակ անց վերաօգտագործվել են ուշ երկաթի դարաշրջանում՝ Աքեմենյան/Երվանդունիների շրջանում, ինչպես վկայում է շերտագրությունը և հայտնաբերված հնագիտական առարկաները, ինչպես նաև կատարված ճարտարապետական փոփոխությունները: Այսպիսով Սոլակ-1-ը տարածաշրջանում երկաթի դարաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների վերակազմման համար կարևոր հնավայրերից մեկն է: Սոլակ-1 հնավայրի ուսումնասիրության համատեքստում կարևոր բացահայտում է նաև հնավայրի մոտակայքում հայտնաբերված ջրամբարը (KSP116): Վերջինս արհեստական ջրամբար է, որը կազմված է երկու հսկա ամբարտակներից: Ջրամբարի հիմնական պատվարը 5մ հաստությամբ պատաշար է: Սոլակ-1 հնավայրի աշխատանքների ընթացքում «Հայկական ժառանգություն» հիմնադրամի հետ համագործակցությամբ մեկնարկել է տարեկան ամառային դպրոց երեխաներին և պատանիներին հնագիտական աշխատանքներին, գտածոների

ուսումնասիրությանը և թանգարանացմանը հաղորդակից դարձնելու համար: Ապագայում նախատեսվում է ավարտին հասցնել Շինություն Ա-ի պեղումները, որը Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում (Արևելյան Թուրքիա, Հայաստան և հյուսիս-արևմտյան Իրան) ամբողջությամբ պեղված այս տեսակի շինություններից առաջինը կլինի: Նախատեսվում է նաև ամրակայել և վերականգնել պեղված կառույցները, շարունակել հանավայրի այլ հատվածների լայնածավալ պեղումները: Այս ամենը կարող է հիմք դառնալ հնագիտական արգելոց ստեղծմանը, որը միտված կլինի ոչ միայն ճարտարապետական արժեքների,




Աշխատանքների ընթացքը Սոլակ-1 հնավայրում
Lavori in corso sullo scavo di Solak-1

այլ նաև միջավայրի, մարդածին գործունեությունից քիչ ներգործություն ունեցած լանդշաֆտի

արժևորմանը: Նման նախագծի իրականացումը, ուղղված է զբոսաշրջության կայուն զարգացմանը, տարածքի և տեղական ավանդույթների պահպանմանը, անկասկած, յուրահատուկ հնարավորություն է հաստատությունների և տեղի բնակչության մշակութային հարստացման համար, որոնք կներգրավվեն այդ պարկի իրականացման և կառավարման բոլոր փուլերում: Զբոսաշրջիկների հոսքը և տեղի արհեստների զարգացումը, ուղիղ և անուղղակի, տնտեսական կայունության կարևոր աղբյուր կհանդիսանան հնավայրի շրջակայքում գտնվող



Սոլակ-1 բացօթյա կայանի համայնապատկերը
Veduta aerea del sito preistorico di Solak-1 open site



Սոլակ-1 հնավայրում հայտնաբերված աղորիքները
Machete e pestelli dalla Struttura A di Solak-1



Սոլակ-1 հնավայրում հայտնաբերված ուրարտական
կարասի բեկորներ
Frammenti di *pitthoi* tipicamente urartei rinvenuti nel sito di
Solak-1

գյուղերի համար, որոնք ուղղակիորեն
կներգրավեն պարկի կառավարման և
համակարգման ամբողջ ծրագրում:

Սոլակ-1 open site (KSP039– Վերին պալեոլիթ)

Սոլակ-1 բացօթյա հնավայրը գտնվում է
Հրազդան գետի հովտի եզրերին, հայտնաբերվել է
2014 թ. հետախուզողական աշխատանքների
ընթացքում, 2015 թ. ուսումնասիրվել է Հրազդան
գետի պալեոլիթյան հնավայրերը ուսումնասիրող
հայ-ամերիկյան արշավախմբի կողմից: Դեպի
կիրճը ճանապարհի անցկացնելու համար
տեխնիկայով հուշարձանը երկու մասի է բաժանվել,
արդյունքում խաթարվել է հնավայրի մի հատվածը:
Առկա վանակատե իրերը, չնայած որոշակի
տեղաշարժմանը, բավականին լավ են պահպանվել:
Հայտնաբերված բոլոր իրերը պատրաստված են
վանակատից: Քարի ինդուստրիայի նախնական
տեխնիկա-տեխնոլոգիական ուսումնասիրությունը,
ցույց է տալիս որ քարի մշակման ողջ գործընթացը
իրականացվել է կայանի տարածքում: Այս մասին են
վկայում հայտնաբերված միջուկները, դրանց
համապատասխանող շեղբերով, մեծ և փոքր
բեկորներով, ինչպես նաև վերջիններիս
արտադրության ժամանակ առաջացած
տեխնոլոգիական կտորներով): Գործիքներ
պատրաստելու համար նախապատրաստուկների
հիմնական ձևը մեծ ու փոքր չափերի բթեցված
շեղբերն են, որոնց մշակումը իրականացված է
կողային մասերի ռետուշով: Առկա են նաև առանց
երկրորդական մշակման շեղբեր ու բեկորներ:
Գործիքների մեջ ոչ մեծ խումբ են կազմում սուր
ծայրով գործիքները, որոնք ներկայացված են
սիմետրիկ և ասիմետրիկ տեսակներով, մեծ
մասամբ առիպիկ են և հանդիպում են ծակող սայրի
չնչին մշակմամբ օրինակներ կամ էլ դրանք ունեն
ուղղակի բեկուտման հետևանքով առաջացած սուր
ծայր: Աշխատանքային գործիքների մեջ
ամենաարտահայտիչ խումբն են կազմում
տարատեսակ կտրիչները, քերիչները, քերթիչները:
Կտրիչները ներկայացված են ինչպես կողային,
անկյունային, այնպես էլ միահանույթ և
բազմահանույթ տարատեսակներով: Առկա են նաև
կտրվածքների վրա պատրաստված կտրիչներ:



Քերիչները նույնպես ներկայացված են բազմաձև և երկրորդական մշակման տարատեսակ հնարների կիրառման միջոցով պատրաստված նմուշներով: Առկա են թե ծայրային և թե կողային քերիչներ, որոնք պատրաստված են հիմնականում կանոնավոր շեղերի ծայրերին: Քերթիչները համեմատաբար փոքր թիվ են կազմում: Առանձին խումբ են կազմում հայտնաբերված կտցավոր գործիքները: Սոլակ-1 բացօթյա կայանի

հավաքածույում առկա են նաև տարատեսակ փոսիկավոր և ատամնավոր իրեր, երկրաչափական ձևեր հիշեցնող առարկաներ: Սոլակ-1 կայանի քարի ինդուստրիայի նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հատուկ է պալեոլիթի եզրափակիչ փուլին՝ միջին վերին պալեոլիթին և նախապես կարող է թվագրվել մեզանից առաջ 35-23-րդ հազարամյակների սահմաններում:

Բերդի- դար (KSP025 – Երկաթի դարաշրջան)

Կոտայքի հետախուզական ծրագրի շրջանակում բացահայտված և հետազոտված հնավայրերի մեջ նշանակալի տեղ ունի Բերդի-դարը: Տեղակայված է Սոլակ-1 և Սևանա լճի Լճաշեն ամրոցի միջև ընկած ճանապարհի միջնամասում դա Երկաթի դարաշրջանի ամրացված փոքր համալիր է, որը, հավանաբար, օգտագործվել է նաև ուրարտական ժամանակաշրջանում: Արշավախմբի աշխատանքների շրջանակում իրականացրած հետախուզական փոսորակը հաստատեց դրա պատկանելիությունը երկաթի դարաշրջանին, սակայն միանգամայն հավանական է, որ հնավայրն



Թղիթ հնավայրի օդալուսանկարը

Veduta aerea del complesso megalitico dell'età del Ferro di Tghit. Si notino le tre cinte murarie

օգտագործվել է նաև ուրարտական շրջանում՝ որպես Արարատյան սարահարթը Սևանա լճի հետկապող ճանապարհի երկայնքով տեղակայված ամրակայված կենտրոններից մեկը: 2023 թ. ամռանը նախատեսված նոր ուսումնասիրությունները ուղղված են լինելու այս վարկածի հաստատմանը: Հատկանշական է նաև, որ ամրոցը գտնվում է նախապատմական ժամանակաշրջանի հսկա բնակավայրի (KSP088) համատեքստում:

Թղիթ (KSP036 – Ուշ Բրոնզե դար, Երկաթի դար, Միջնադար)

Թղիթ ամրոցը տեղակայված է ավելի քան 2000 մետր բարձրության վրա՝ ռազմավարական դիրքում, իշխում է Հրազդանի ամբողջ հովտի և շրջակայքի վրա: Թղիթի հնագիտական համալիրը հայ-իտալական արշավախմբի աշխատանքների ընթացքում հետազոտված հնավայրերից մեկն է: Այն բաղկացած է ամրակայված համալիրից, արհեստական լճից և ժայռափոր խցից: Ամրակայված համալիրը Հայաստանում փաստագրվածներից ամենագեղատեսիլ



հնավայրերից մեկն է, իր չափերով և պահպանվածությամբ մրցակցում է Վրաստանի Աբուլի և Շաորի հայտնի համալիրների հետ: Ամրոցի պատերի հաստությունը հասնում է 4 մ-ի, պահպանված բարձրությունը 6 մետրի: Արհեստական լիճը և ջրմատակարարման հետ կապված միավորները ծառայել են թե՛ այստեղ կայանած կայազորի և թե՛ հովտից ապաստան գտածների համար: Ժայռափոր խուցը (KSP222) հայտնաբերվել է 2021 թ., գտնվում է ամրոցից մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա և հավանաբար եղել է համայնքի կարևոր անձնավորություններից մեկի դամբարանը: Ամրոցում դրված խուզահորանից ձեռք բերվեց երկաթի դարի խեցեղեն, թեն չի կարելի բացառել ամրոցի ավելի վաղ լինելը: Իր ռազմավարական կարևորության շնորհիվ՝ հնավայրը օգտագործվել է ընդհուպ մինչև ուշ միջնադար:

Մեղրաձոր (ԿՇԾ059/KSP059 – Վաղ բրոնզի դար)

Մարմարիկ գետի հովիտը հնագիտական տեսակետից մեծ կարևորություն ունի, հատկապես նախապատմական համայնքների ուսումնասիրության համար: Տարիների ընթացքում ուսումնասիրված բազմաթիվ հնավայրերից Մեղրաձորը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Այն վաղ բրոնզի դարի բնակատեղի է, որն առանձնանում է կուր-արաքսյան մշակույթին վերաբերող նյութերով: Գտնվում է բլրի գագաթին, որտեղ կառուցված շինության և կապի օպերատորների կողմից ալեհավաքների տեղադրման արդյունքում զգալիորեն խաթարվել է: Բլրի լանջին, որտեղից հայտնաբերվել է կուր-արաքսյան խեցեղեն, իրականացվել են հետախուզական պեղումներ, արդյունքում բացահայտեցին տարատեսակ անոթների հարյուրավոր բեկորներ, որոնք որոշ դեպքերում ամբողջությամբ վերականգնվել են: Մեղրաձորը հավանաբար եղել է Մարմարիկի հովտի վաղ բրոնզի դարի ամենակարևոր հնավայրերից մեկը:

Բերդի գլուխ (KSP061 – Վաղ բրոնզի դար, ուշ բրոնզ, երկաթի դար, միջնադար)

Բերդի գլուխ հնավայրը ամրացված համալիր է, գտնվում է բնական բարձր բլրի վրա, որն իշխում է Մարմարիկ գետի միջին հովիտի և Ժամանակակից Մեղրաձոր գյուղի վրա: Այստեղ խաչի տեղադրման համար մեխանիկական միջոցներից առաջացած խաթարումների հետևանքով դեռևս 2019 թ. հայտնաբերվել են վաղ և ուշ բրոնզի դարերի, երկաթի դարի և միջնադարյան խեցեղենի բեկորներ: Արշավախմբի ջանքերով դադարեցվել են խաչի տեղադրման աշխատանքները, խաթարված շերտերից հայտնաբերվել են նաև մետաղի խարամի, ոսկու հանքի հին փորվածքների հետքեր, ինչով հայտնի է Մարմարիկի հովիտը, իսկ ոսկու հանքը շահագործվում է մինչ օրս: 2022 թ. պեղվեցին երկու հետախուզական փոսորակներ՝ բլրի երկու տարբեր հատվածներում: 1-ին փոսորակը բացվեց պարսպապատի մոտ, նպատակն էր պարզել կառուցման Ժամանակաշրջանը: Չնայած չհաջողվեց հասնել հիմնահողին, բայց կարևոր տեղեկություններ ստացվեցին: Պարսպապատը կարելի է հասակագրել վաղ բրոնզի դարով, ինչը տարածաշրջանի ռազմականացման գործընթացների վերլուծության առումով կարևոր դիտարկում է: Վաղ բրոնզի դարը գիտական համայնքի կողմից գնահատվում է որպես խաղաղ դարաշրջան, իսկ ռազմականացման գործընթացները սովորաբար վերագրում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերին: Կարծում ենք, որ տարածաշրջանում ռազմականացման գործընթացները սկսվել են ավելի վաղ, և Բերդի գլուխ հնավայրի պեղումները թույլ կտան ավելացնել այն կարևոր օղակը այս դինամիկ համալիրները վերկազմելու համար: 2-րդ փոսորակը դրվել է դեռ 2019 թ. վաղբրոնզիդարյան խեցեբեկորների կուտակաման վայրում, վերականգնման համար անհրաժեշտ պակասող բեկորների ձեռք բերման նպատակով:

Քաղսի-2 (ԿՀԾՕ46 /KSP046 – Վաղ բրոնզի դար, Միջնադար)

Քաղսի-2-ը գտնվում է Հրազդան գետին հարող առաջին դարավանդի վրա: Այստեղ 2015 թ. դրվել էր հետախուզական փոստրակ, որտեղից գտնվել են Կուր-արաքսյան խեցեղեն բեկորներ, հատկապես արժեքավոր է այստեղ հայտնաբերված օբսիդիանից ամանի հատվածը: Այն ունի անոդորկ մակերես, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այն անավարտ է, հավանաբար ջարդվել է դեռ պատրաստման ընթացքում: Նմանատիպ առարկաներ հայտնի են մ.թ.ա. VI-III հազարամյակի մերձավորարևելյան մի քանի հնավայրերից: Այս գտածոն հանդիսանում է տարածաշրջանում դեռևս միակ նմանօրինակ իրը:

Ջրառատ (Վաղ և ուշ բրոնզի դար, Երկաթի դար, Միջնադար)

Ջրառատի թիվ 1 դամբարանադաշտը գտնվում է Կոտայքի մարզի Ջրառատ գյուղի Մամաներ տեղամասում: Այստեղ ևս պեղումները կրել են փրկարարական բնույթ:

Կրոմլեխը հատակագծում շրջանաձև է (9,85մ (հյուսիս – հարավ) – 9,50մ (արևելք – արևմուտք)), շարված՝ բազալտի անմշակ քարերով: Հյուսիսային հատվածում դամբարանն օղակող կրոմլեխը կառուցված է համեմատաբար ավելի խոշոր՝ 50 – 70սմ երկարությամբ և մոտ 45 – 65սմ բարձրությամբ բավականին խոշոր, իսկ հարավային հատվածում՝ չափերով ավելի փոքր բազալտի քարերով: Դամբարանի կրոմլեխի արևմտյան հատվածում արձանագրվեց կրոմլեխին միաձուլված, համեմատաբար փոքր քարերով շարված կիսակլորավուն շարվածք, որը շարունակվում է դեպի կտրվածքը՝ թերևս մեկ այլ դամբարանի կրոմլեխի հատված: Միայն հողահեռացման աշխատանքների ավարտից հետո պարզ դարձավ, որ դամբարանը երկխցանի է՝ կենտրոնական մեծ խուցը և կրոմլեխի արևելյան հատվածում



Ջրառատի դամբարանադաշտում 2022 թ. պեղված դամբարանը

Deposito votivo rinvenuto intatto da una sepoltura del Tardo Bronzo indagata nel 2022 nella necropoli di Jrarat

արձանագրված փոքր դամբանախուցը:

Կենտրոնական՝ մեծ դամբանախցին տրվեց 1/ա, իսկ փոքր խցին՝ 1/բ համարները:

1/ա դամբանախուցը ծածկող, նախնական տեղում գտնվող միակ խոշոր քարն արձանագրվեց հարավային հատվածում՝ հորիզոնական դիրքով, շրջակայքում առկա էին բազմաթիվ խոշոր քարեր, որոնցով ամենայն հավանականությամբ ծածկված է եղել դամբանախուցը: Դամբանախցի ծածկի քարերը (ամենախոշոր քարերը հեռացվել են ծանր

տեխնիկայի միջոցով) և դրանց տակի հողի հեռացումից հետո ուրվագծվեցին դամբանախցի պատերի վերին հատվածները: Ուղղանկյունաձև հատակագծով սալարկղային դամբանախուցը (1,95 × 1,25 × 1,20մ) երկայնական առանցքով ուղղված է հյուսիսարևմուտքից–հարավարևելք: Դամբանախցի լայնակի պատերը կառուցված են հորիզոնական դրված մեկական խոշոր սալ քարերով, որոնցից հարավայինի տակ դրված են մի քանի մանր քարեր: Երկայնական պատերից արևելյանը կառուցված է երկու քարով: Քարերը դրված են կողք – կողքի, տափակ երեսը ներս, հորիզոնական դիրքով: Երկու քարերի միջև ազատ միջակայքը լցվել է մանր քարերով: Մանր քարերով է լցված նաև արևելյան երկայնական պատի հարավային հատվածի և հարավային լայնակի պատի արևելյան հատվածի միջև առկա ազատ տարածքը: Վերոհիշյալ երկու քարերի միջև եղած բարձրությունների տարբերությունը կարգավորելու նպատակով այս հատվածում հորիզոնական դիրքով, կողային հատվածը դեպի ներս դրված է խոշոր սալաքար: Արևմտյան երկայնական պատը ևս շարված է երկու՝ հորիզոնական դրված, ուղղանկյունաձև, խոշոր և

ուղղահայաց դրված, չափերով ավելի փոքր քարերով, որոնց միջև ստորին հատվածում առկա միջակայքը լրացվել է իրար վրա դրված երեք քարերով: Հորիզոնական դրված քարի հյուսիսային մասի ստորին հատվածի տակ ևս դրված են քարեր: Համաչափությունն ապահովելու նպատակով ևս մեկ խոշոր սալաքար հորիզոնական դիրքով դրված է պատի երկու քարերի վրա: Հյուսիսային լայնակի պատի և արևելյան երկայնական պատի վերին հատվածում քարերը միանում են, իսկ ներքևում՝ միջակայքը հիմնահողն է: Դամբանախուցը լցված էր մանր և միջին չափի քարերի և սևահողի լիցքով: Դամբանախցի լիցքը՝ վերին շերտից մինչև հատակ, առատ էր բազմաթիվ խեցեղեկորներով, կենդանական և մարդկային կմախքի ոսկորներով:

Դամբանախցում արձանագրվեց մասնակի պահպանված կմախքի ոսկորներով դիաթաղում: Մարդկային բեկոտված գանգն՝ առանց ստորին ծնոտի, արձանագրվեց դամբանախցի հյուսիսային հատվածում: Գանգը դրված էր ոտքերի ոսկորների և կոնքոսկրների կույտի վրա: Կոտրված ստորին ծնոտի մի կեսը գտնվեց դամբանախցի կենտրոնական հատվածից, մյուսն արձանագրվել

էր հատակից ավելի բարձր՝ հարավարևելյան հատվածում: Ննջեցյալի ոտնաթաթերն արձանագրվեցին դամբանախցի հարավային հատվածում: Ոտնաթաթերի անխաթար դիրքից և դամբանախցում արձանագրված իրավիճակից ելնելով կարելի է ասել, որ 40 տարեկանից բարձր, արական սեռի ննջեցյալը գլուխը դեպի հյուսիս, աջ կողքի վրա պառկած է եղել դամբանախցի երկայնքով:

Դամբանախցի հարավարևմտյան հատվածում արձանագրվեց մանր եղջերավոր կենդանու կմախքի հատված, գլուխը դեպի արևմուտք՝ աջ կողմի վրա դրված, մարմինը՝ արևելք: Կենդանիների ոսկորներ էին



Քարաշամբի դամբարանադաշտի համայնապատկերը
Veduta aerea della grande necropoli di Karashamb

սփռված նաև դամբանախցի տարբեր հատվածներում:

Գույքը՝ մեկ ամբողջական քրեղան և խեցանոթի հատակամերձ հատված արձանագրվեցին դամբանախցի հարավարևմտյան հատվածում՝ երկայնական պատի դիմաց: Խեցեբեկորներ արձանագրվեցին դամբանախցի տարբեր հատվածներում:

1/բ դամբանախոցը ծածկող խոշոր քարերն արձանագրվեցին երկու շարքով, հորիզոնական դիրքով՝ խցի լայնքով դրված: Ուղղանկյունաձև հատակագծով սալարկղային դամբանախոցը (1,45 × 0,65 × 1,07մ) երկայնական առանցքով ուղղված է հյուսիսից – հարավ: Դամբանախցի հյուսիսային լայնակի պատը հիմնահողային է: Հարավային լայնակի պատը կառուցված է մեկ խոշորքարով, որի տակ միջին չափի քարեր են դրված: Խցի արևելյան և արևմտյան պատերը կառուցված են հորիզոնական դրված խոշոր սալքարերով և հյուսիսային հատվածում ուղղահայաց դրված մեկական երկարավուն քարով: Դամբանախոցը լցված էր սևահողի և հազվադեպ հանդիպող մանրքարերի լիցքով:

Դամբանախցում մարդաբանական նյութ չարձանագրվեց:

Դամբանախցի արևելյան երկայնական պատի հյուսիսային հատվածում՝ պատին կից, խեցանոթների վրա դրված էր կենդանու՝ ամենայն հավանականությամբ խոզի, գանգ: Դամբանախցի հյուսիսային լայնակի պատի դիմաց՝ արևմտյան հատվածում, արձանագրվեց մանր եղջերավոր կենդանու գանգ և մանր և խոշոր կենդանիների կողոսկրեր: Խոշոր եղջերավոր կենդանու ոտքի ոսկոր էր դրված կաթսայատիպ անոթի մեջ: Կենդանիների ոսկորներ էին սփռված նաև դամբանախցի կենտրոնական, ավելի քիչ հարավային հատվածում նաև խեցանոթների տակ և մեջ, ինչպես նաև արևմտյան հատվածում դրված հենակ – պատվանդանի շուրջը:



Բարձրլեռնային գոտում քարացրոնների մեջ կառուցված ամրոց-ապաստարան

Sito megalitico costruito ad alta quota su colata-lavica, parte del sistema delle fortezze-rifugio protostoriche

Գույքը – Դամբանախցում արձանագրվեց 38 խեցեղեն առարկա, մեկ բրոնզե ապարանջան, մածուկե սպիտակ և կապույտ ուլունքներ: Դամբանախցի հյուսիսային լայնակի պատի դիմաց դրված էր կաթսայատիպ խեցանոթ: Հյուսիսարևմտյան հատվածում՝ դամբանախցի արևմտյան երկայնական պատի դիմաց, դրված էր հենակ – պատվանդան, որի վրա առկա էր արկղ – գոհարան: Դամբանախցի հարավարևելյան հատվածում՝ արևելյան երկայնական պատի դիմաց, արձանագրվեց ավելի փոքր չափերի հենակ – պատվանդան վրան՝ չորս հարթակներով օժտված սափոր, որի հարթակներից մեկի վրա դրված էր փոքրիկ սրվակաձև անոթ: Մյուս հարթակների վրա դրված, բայց հետագայում վայր ընկած երեք փոքրիկ անոթները գտնվեցին հարթակների ուղղությամբ՝ հատակին: Հարթակներով օժտված սափորի բերանին դրված էր երկու քրեղան: Դամբանախցի հյուսիսային և հարավ արևմտյան հատվածներում արձանագրվեցին մեկը մյուսի մեջ դրված մի քանի քրեղաններ, որոնց վրա շարված էին լայնաբերան կճուճներ, սափորատիպ անոթներ: Դամբանախցի արևելյան երկայնական պատի

դիմաց դրված էին երկկողմ ներճկումով երկու քրեղան, որոնցից մեկի մեջից գտնվեց մեկ, իսկ մյուսի մեջից՝ երկու սրվակաձև փոքրիկ անոթ: Նման փոքրիկ անոթներ արձանագրվեցին նաև դամբանախցի կենտրոնական հատվածում՝ հատակին և անոթների վրա: Դամբանախցի հարավարևելյան հատվածում դրված երկկողմ ներճկումով քրեղանի կողքից գտնվեցին բրոնզե ապարանջան և մածուկե ուլունքներ:

Համաժամանակյա հայտնի դամբարանային համալիրների հետ համադրման արդյունքում դամբարանը կարելի է վերագրել ուշ բրոնզի դարի երկրորդ փուլին (LՄ2) և նախնական ժամանակագրել՝ մ.թ.ա. XVդ. երրորդ քառ. – XIVդ.:

Հատիս / Շամիրամաբերդ (KSPI63 – Բրոնզ / Երկաթի դարեր)

Ամրոցը գտնվում է Հատիսի կոնաձև գագաթին: Կազմված է գագաթի եզրագծերով հյուսիսից-հարավ ձգվող պարսպապատերով: Արևելյան պարսպապատն ունի՝ 140, արևմտյանը՝ 280 մ երկարություն: Պատերի լայնությունը տատանվում է 2-ից 4,5 մ, բարձրությունը՝ 1-3 մ միջև: Լանջերին պահպանվել են լրացուցիչ պարիսպների մնացորդներ: Կառուցված են բազալտի խոշոր և միջին չափերի անմշակ քարերով: Պարսպապատերն ամրացված են որմնահեղեղով և աշտարակներով: Հարավային անկյունային աշտարակն ունի 5 × 6 մ չափերի ուղղանկյուն հատակագիծ: Արևելյան պարսպապատի մեջ պահպանվել է 3մ լայնությամբ մուտքը, որի երկու կողմերում երկու որմնահեծներ կան: Արևմտյան պարսպաշարի երկարությամբ ձգվում են հնավայրի հիմնական կառույցները: Պարսպաշարը կառուցված է խոշոր քարերից պահպանվել է ավելի քան 10 շարք բարձրությամբ, մոտ 3 մ: Արևմտյան պարսպաշարին կից առկա են տարածաշրջանի մի շարք հնավայրերում արձանագրված քարացրոնների կից կամ նրանց մեջ տեղակայված կառույցներ: Ամրոցի ընդհանուր



Խորադիր նախշերով զարդարված երկաթեղարյան անոթ
Vasetto miniaturistico con decorazione incisa, tipica dell'Età del Ferro

տարածքը՝ պարսպապատերից դուրս ընկած կառույցներով հանդերձ ավելի քան 12,5 հա է: 2023 թ. ամռանը հայ-իտալական արշավախումբը ամրոցի ուսումնասիրության առաջին փուլի համար նախատեսել է պեղումներ կատարել պարսպապատերով պարփակված 280 × 100 մ չափերով տարածքում, արևելյան պարսպապատից դուրս ընկած մուտքին հարող և աշտարակատիպ կառույցներում, ամրոցի հարավային մասի աշտարակի և նրան հարող հատվածներում շուրջ 800 քառ.մ մակերեսի վրա: Մինչ 2022 թ. հողային աշխատանքներն ամրոցի կենտրոնական, հարավային և արևմտյան կողմերում առկա էին կառույցների փլատակներ: Արձանի տեղադրման նպատակով կատարված շինարարական աշխատանքների հետևանքով պարսպափակ տարածքի վերոնշյալ կառույցները հիմնովին ավերվել են, պարիսպների զգալի հատվածներ՝ խաթարվել:

ԵՎՐՈՊԱ ՆՈՍՏՐԱ ՄՐՑԱՆԱԿ / Եվրոպական Ժառանգության Մրցանակ 2019 թ. ՍՈԼԱԿ-1. ԿԱՆԽՈՐՈՇՎԱԾ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ

Մ. թ.ա. IX և VIII դարերի միջև ժամանակակից Հայաստանի տարածքը ներառող ուրարտական թագավորությունն զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի մեծ մասը: Ուրարտական պետությունը և նրա իշխող դինաստիան անկում են ապրում և ամբողջովին անհետանում մ.թ.ա. VII և VI դարերում: Աքեմենյան ժամանակաշրջանում ուրարտական ժառանգությունը ընդունում և շարունակում են Երվանդունիները (մ.թ.ա. VI-III դար)՝ Հայկական լեռնաշխարհի առաջին բնիկ դինաստիան, որը զբաղեց ուրարտական բոլոր գլխավոր քաղաքական և ռազմական կենտրոնները: Կոտայքի հետախուզական ծրագրի հայ-իտալական համագործակցության շրջանակում

Սոլակ-1/Վարսակ հնավայրի հայտնաբերումը թույլ տվեց հարստացնել Հայաստանում ուրարտական ներկայության մասին մեր պատկերացումները, Ուրարտուի և տեղացիների միջև հարաբերությունների, Ուրարտուն հաջորդող դինաստիաների հետ միավորող յուրահատուկ մշակութային շարունակականության մասին պատկերացումները: Կոտայքի հետախուզական ծրագիրը (KSP) միտված է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, Կոտայքի մարզում նախնադարից մինչև միջնադար ավելի քան 200 հնավայրերի՝ այդ թվում Սոլակ-1/Վարսակ ամրոցի ուսումնասիրությանը: Ուրարտական շրջանի այս հնավայրը իր տեսակի մեջ միակն է և լրացնում է



2019 թ. Եվրոպա Նոստրա մրցանակաբաշխության հաղթողները
Foto dei vincitori di Europa Nostra Awards 2019

տարածաշրջանում ուրարտական բնակեցման համակարգի վերակառուցման կարևոր բացը: Գիտական ծրագիրը, որի արդյունքում հայտնաբերվեց 32 հեկտար մակերեսով երկաթի դարի ամենակարևոր հնավայրերից մեկը և տարածքի հետախուզման և հնագիտական պարկի ստեղծման միջոցով արժևորման ծրագիրը՝ 2019թ. գիտական ուսումնասիրություն անվանակարգում արժանացավ «Եվրոպա Նոստրա» մրցույթի Եվրոպական Միության մշակութային ժառանգության մրցանակին (Եվրոպական Միության Միջանակ Մշակութային ժառանգության համար/ Եվրոպա Նոստրա Մրցանակ): Այս մրցանակը Եվրոպական խորհրդի ամենահեղինակավոր մրցանակն է մշակութային ժառանգության պահպանման և արժևորման ոլորտում: Կարևոր է ընդգծել, որ ծրագիրը հատուկ արժևորել է միջազգային համագործակցության կարևորությունը, Եվրոպա Նոստրա-ի պատմության մեջ առաջին անգամ մրցանակ ստացան միաժամանակ երկու երկրներ՝ Հայաստանը և Իտալիան, հետազոտական մեկ ծրագրի համար: Հետազոտական ծրագիրը, որի համադրվածությունն են Արթուր Պետրոսյանը (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) և Ռոբերտո Դանը (ISMEO), համագործակցում է միջազգային թիմի հետ, որը բաղկացած է տարբեր ազգությունների գիտնականներից և ուսանողներից, բացի հնագետներից, աշխատանքներում ընդգրկված են նաև հնաբուսաբաններ, հնակենդանաբաններ, մարդաբաններ, քիմիկոսներ, ճարտարապետներ, քարտեզագիրներ և թանգարանագետներ: Ողջ հետազոտական աշխատանքը իրականացվում են տեղական հաստատությունների և գիտնականների հետ սերտորեն համագործակցելով, առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում համայնքային կրթությանը և անձնակազմի որակավորմանը՝ դաշտում տեսական և գործնական դասընթացների միջոցով, ինչպես նաև համալսարանների, ակադեմիաների և դպրոցների ուսանողների գիտական կրթությանը:



Կոտայքի հետախուզական նախագծի ղեկավարներ Արթուր Պետրոսյանը և Ռոբերտո Դանը Եվրոպա Նոստրա մրցանակաբաշխության ժամանակ

I due direttori del Kotayk Survey Project, Artur Petrosyan e Roberto Dan, durante la premiazione di Europa Nostra Awards 2019

«Այս հետազոտությունը մինչ օրս բավականաչափ չուսումնասիրված ուրարտական ժառանգության ոլորտում բազմաառարկայական միջազգային համագործակցության արդյունք է: Այն հիմնալի օրինակ է, թե ինչպես կարելի է սահմանափակ միջոցներով արտակարգ արդյունքների հասնել»:

«Փորձագետների հայ-իտալական այս համագործակցությունն ընդգծում է մշակութային շարունակականությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ հնությունները դարձնելով ոչ թե օտար բաղադրիչ, այլ համայնքների կյանքի անբաժանելի մաս: Այդ մասին է վկայում Մոլակ 1 տեղանքի ընտրությունը որպես Հայաստանի առաջին հնագիտական պարկի մաս»:

«Այս ծրագիրը տվյալ ոլորտում և գիտական հետազոտություններում իրականացրել է ուսուցում՝ երաշխավորելով տարածաշրջանում ժառանգության պահպանության կայուն կառավարումն ու զարգացումը»:

ELENCO PUBBLICAZIONI DEL KOTAYK SURVEY PROJECT E DEL VAYOTS DZOR PROJECT (2011-2023) ԿՈՏԱՅԷՐԻ ՀԵՏԱՆՈՒԶԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՒ ՎԱՅՈՑ ԶՈՐ ՆԱԽԱԳԾԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ (2011-2023)

MONOGRAFIE IN PREPARAZIONE

ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ferdinandi, S., A. Bobokhyan, R. Dan, A. Petrosyan, P. Vitolo, B. Gasparyan, *Archaeological Research in Armenia 1 (ARA 1). Preliminary results of the 2022 Armenian - Italian archaeological activities and other studies*, Serie Orientale Roma.
- Petrosyan, A., R. Dan, P. Vitolo, *Kotayk Survey Project Monograph 1: The building A in Solak-1/Varsak: Architecture, stratigraphy and materials*.
- Petrosyan, A., R. Dan, *Surveys and excavations in the Marmarik River Valley*.
- Petrosyan, A., R. Dan, *Kotayk Survey Project: the results of the survey in Kotayk region of Armenia*.

MONOGRAFIA IN STAMPA

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Dan, R., A.S. Bonfanti, A. Petrosyan, B. Gasparyan, *Regionalism and Internationalisation in the Urartian period. An Iron Age Metal Hoard from Yeghegnadzor, Armenia*, Serie Orientale Roma.

ARTICOLI PUBBLICATI

ՀՐԱՍԱՐԱԿԱԾ ՀՈԴԿԱԾՆԵՐ

- Biscione, R., R. Dan (2011) Dimensional and Geographical Distribution of the Urartian Fortifications in the Republic of Armenia, in *AjNES/ARAMAZD*, VI, 2, pp. 104-120.
- Dan, R., R. La Farina (2012) Ricerche su alcuni siti dell'Armenia pre-classica. *Studi Micenei ed Egeo-Anatolici*, 53, pp. 249-262.
- Castelluccia, M., R. Dan, R. La Farina, A. Petrosyan, M. Raccidi (2012) The First Season of the Kotayk Survey Project: Preliminary Report. *AjNES/Aramazd*, VII, 2, pp. 28-35.
- Badalyan, M., Y. Grekyan, R. Dan, A. Zakyan (2012) An Unpublished Inscribed Brick of Aššur-nasir-apli II from the Museum of Erebuni. *AjNES/Aramazd*, VII, 2, pp. 49-53.

Castelluccia, M., R. Dan, R. La Farina, S. Nahapetyan, M. Raccidi, A. Petrosyan (2014) The Armenian-Italian Excavation in Kotayk. Results of the 2013 Campaign and Planned Future Activities. *International Conference Cultural Heritage Preservation in Occasion of Toros Toromanyan's 150th Anniversary*, pp. 107-112.

Petrosyan, A., R. Dan, R. La Farina, M. Raccidi, M. Castelluccia, B. Gasparyan (2015) The Kotayk Survey Project (KSP): Preliminary Report on 2014 Fieldwork Activity. *AjNES/Aramazd*, IX, 1, pp. 58-68.

Dan, R., B. Gasparyan, Y. Keheyan, A. Petrosyan (2015) Testimonianze archeologiche della produzione del vino nell'antica Armenia. *Res Antiquae*, 12, pp. 1-22

Petrosyan, A., R. Dan (2015) The Main Results of the 2013-2015 Campaigns of Newly Discovered Fortress of Solak 1. In AA.VV. (a cura di) *Proceedings of 14th International Conference of Young Scientists 29-31 October 2015*. Yerevan, pp. 22-23.

Petrosyan, A., R. Dan, B. Gasparyan (2016) Gli oggetti di ornamento in Armenia dalla Preistoria all'antica Età del Ferro. In N. Negroni Catacchio (a cura di), *Preistoria e protostoria in Etruria, atti del dodicesimo incontro di studi. Ornarsi per comunicare con gli uomini e con gli Dei. Gli oggetti di ornamento come status symbol, amuleti, richiesta di protezione. Ricerche e scavi*. Milano, pp. 407-420.

Dan, R., A. Petrosyan (2017) The Kotayk Survey Project: Preliminary Report on 2015 Fieldwork Activities. *Annali Sezione Orientale*, 77, 1-2, pp. 294-317.

Petrosyan, A., R. Dan, P. Vitolo, V. Melikyan, S. Nahapetyan, G. Moradi (2017) The Kotayk Survey Project (KSP): Preliminary Report on 2016 Fieldworks Activities. In *Metsamor Readings 1*, Yerevan, pp. 149-162.

Dan, R. (2017) A New Interpretation of the 'External Portico' of Arin-berd/Erebuni, Armenia. *Ash Sharq*, 1, 2, pp. 211-223.

Castelluccia, M., R. Dan, M. La Farina, A. Petrosyan, M. Raccidi (2017) L'attività archeologica italiana dell'ISMEO in Armenia. In A. Ferrari, E. Pupulin, M. Ruffilli, V. Tommelleri (a cura di) *Armenia, Caucaso e Asia Centrale Ricerche 2017*. Eurasiatica 7. Venezia, pp. 39-58.

Avetisyan, P., R. Dan, A. Petrosyan (2018) Axes, Labyrinths and Astral Symbols: Bronze Pendants and Pins from

- the Armenian Highlands. *Ancient West and East*, 17, pp. 27-63.
- Petrosyan, A., R. Dan, P. Vitolo (2018) Un'introduzione allo sviluppo delle asce in Armenia. In *Atti del Tredicesimo Incontro di Studi Valentano (VT)-Pitigliano (GR)-Manciano (GR), 9-11 Settembre 2016 Armarsì per comunicare con gli uomini e con gli Dei. Le armi come strumenti di attacco e di difesa, status symbol e dono agli Dei*. Milano, pp. 165-180.
- Dan, R., B. Gasparyan, P. Vitolo, A. Petrosyan, T. Saccone, S. Nahapetyan, A. Adigoyalyan, G. Moradi, C. Zecchi (2018) The Rock-cut Archaeological Complex of Yelpin-1, Vayots Dzor Province, Armenia. *AjNES/Aramazd*, XII, 2, pp. 59-82.
- Keheyan, Y., M. Badalyan, R. Dan (2018) Some analyses of pigments from Erebuni. *AjNES/Aramazd*, XII, 2, pp. 83-96.
- Dan, R., P. Vitolo (2018) La produzione del vino nello stato di Bia/Urartu. *Bollettino Unione Storia ed Arte*, 13, pp. 139-151.
- Petrosyan, A., R. Dan, P. Vitolo (2019) Solak 1. Una fortezza urartea nella valle del Hrazdan, Armenia. In P. Avetisyan, R. Dan, Y. Grekyan (a cura di) *Over the Mountains and Far Away. Studies in Near Eastern history and archaeology presented to Mirjo Salvini on the occasion of his 80th birthday*. Oxford, pp. 391-400.
- Badalyan, M., G. Basello, R. Dan (2019) The Elamite Tablets from Armavir-Blur (Armenia): A Re-Examination*. In P. Avetisyan, R. Dan, Y. Grekyan (a cura di) *Over the Mountains and Far Away. Studies in Near Eastern history and archaeology presented to Mirjo Salvini on the occasion of his 80th birthday*. Oxford, pp. 34-45.
- Dan, R., Y. Keheyan, N. Hovhannisyan, A. Petrosyan, Y. Atoyants, P. Vitolo, B. Gasparyan (2019) A New Painting Fragment from Erebuni and an Overview of Urartian Wall Paintings. In P. Avetisyan, R. Dan, Y. Grekyan (a cura di) *Over the Mountains and Far Away. Studies in Near Eastern history and archaeology presented to Mirjo Salvini on the occasion of his 80th birthday*. Oxford, pp. 171-186.
- Dan, R., P. Vitolo, M. Castelluccia, R. Giura (2019) From Urartu to "Media", a Reassessment of So-called "Post-Urartian" or "Median" Pottery: 1. Vases with two Horned Handles. In B. Genito, G. Maresca (a cura di) *Ceramics and the Archaeological Achaemenid Horizon. Near East, Iran and Central Asia*. Napoli, pp. 61-87.
- Dan, R., M. Delle Donne, M. Badalyan, A. Petrosyan, B. Gasparyan, P. Vitolo, G. Moradi, C. Milanese, L. Costantini (2019) Production and Storage of Food Plants in Armenia during the Iron Age: The Evidence from Karmir-blur/Teišebai URU, Arin-berd/Erebuni and Solak-1. In M. Baldi, R. Dan, M. Delle Donne, G. Lucarini, G. Mutri (a cura di) *Archaeology of Food. New Data from the International Missions in Africa and Asia, Proceedings of the 1st Workshop on the Archaeology of Food*. Serie Orientale Roma N. S. 17. Roma, pp. 141-164.
- Dan, R. (2019) Between Urartian and Achaemenid Architectural Traditions: Considerations on the so-called "Urartian wall" of Artaşat. *Iranica Antiqua*, LIV, pp. 1-16.
- Petrosyan, A., R. Dan (2019) Solak 1: a Model of Predictive Archaeology/Armenia/Italy. In AA.VV., *European Heritage Awards/Europa Nostra Awards Laureates 2019*, pp. 34-35.
- Gasparyan, B., D.S. Adler, K. Wilkinson, S. Nahapetyan, C.P. Egeland, P.J. Glauberman, A. Malinsky-Buller, D. Arakelyan, M. Arimura, R. Dan, E. Frahm, H. Haydosyan, A. Azizbekyan, A. Petrosyan, A.W. Kandel, (2020) Study of the Stone Age in the Republic of Armenia (Part 1 – Lower Palaeolithic). In A. Kosyan, P. Avetisyan, A. Bobokhyan, Y. Grekyan (a cura di) *Aramazd X 1-2, Armenian Archaeology. Past Experiences and New Achievements*. Oxford, pp. 1-60.
- Gasparyan, B., R. Dan, A. Petrosyan, P. Vitolo (2020) The Vayots Dzor Project (VDP): A Preliminary Overview of the First Three Years' Activities (2016-2018). In A. Kosyan, P. Avetisyan, A. Bobokhyan, Y. Grekyan (a cura di) *Aramazd X 1-2, Armenian Archaeology. Past Experiences and New Achievements*. Oxford, pp. 143-183.
- Petrosyan, A., R. Dan, P. Vitolo (2020) The Kotayk Survey Project (KSP): An Overview of the First Six Years of Activities (2013-2018). In A. Kosyan, P. Avetisyan, A. Bobokhyan, Y. Grekyan (a cura di) *Aramazd X 1-2, Armenian Archaeology. Past Experiences and New Achievements*. Oxford, pp. 208-233.
- Petrosyan, A., R. Dan, P. Vitolo, M. Arimura, A. Cesaretti, B. Gasparyan (2020) Lo sviluppo diacronico dei sistemi insediativi in Armenia. In N. Negroni Catacchio (a cura di) *Archeologia dell'abitare. Insediamenti e organizzazione sociale prima della città. Dai monumenti ai comportamenti. Vol. 1. Ricerche e scavi. Atti del Quattordicesimo Incontro di Studi Valentano (VT) – Pitigliano (GR) – Manciano (GR), 7-9 Settembre 2018*. Milano, pp. 471-489.
- Petrosyan, A., R. Dan, B. Gasparyan (2020) Good Practices for Collaboration in the Identification, Study and Protec-

- tion of Cultural Heritage: The Armenian - Italian Archaeological Expeditions in Kotayk and Vayots Dzor (Armenia). In A. Avagyan (a cura di) *Cultural Heritage. Experience & Perspectives in International Context. Proceedings of the Rochemp Center International Conference 23rd – 24th of January 2020*. Yerevan, pp. 23-37.
- Cesaretti, A., R. Dan, (2020) La nascita e lo sviluppo dei fenomeni di militarizzazione nell'Altopiano armeno e nel Caucaso Meridionale. *Bollettino Unione Storia ed Arte*, 15, pp. 183-193.
- Petrosyan, A., R. Dan, P. Vitolo, V. Melikyan, O. Gasparro, S. Nahapetyan (2021) Archaeological Investigations in Kotayk Region as Part of the Kotayk Survey Project (KSP). A Glance at a Selection of Fortresses (2013-2019). In P. Avetisyan, A. Bobokhyan (a cura di) *Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on July 9-11, 2019 in Yerevan*. Yerevan, pp. 135-153.
- Petrosyan, A., H. Azizbekyan, B. Gasparyan, R. Dan, A. Bobokhyan, M. Amiryam (2021) Foregrounding Daily Data Collection on Archaeological Fieldwork. *Advances in Archaeological Practice* 9/4, pp. 1-13.
- Dan, R., A. Cesaretti (2021) Seeking Refuge in Mountain Fortresses and Temporary Shelters: Approaching the Militarization Processes in the Van, Sevan and Orumiyeh Basins. *Ancient West and East*, 20, pp. 1-19.
- Dan, R., A. Cesaretti (2022) The Rise of Militarization in the Van, Sevan and Orumiyeh Basins: The Increase in Conflicts and the Birth of Military Architecture from Proto-history to the Emergence of the State. *Ancient West & East*, 21, pp. 1-35.
- Gasparyan, B., R. Dan, A. Petrosyan (2022) Vayots Dzor. Vino armeno sulla Via della Seta. *Archeologia Viva*, 212, pp. 20-31.
- Dan, R., B. Gasparyan, P. Vitolo, S. Aghaian, A. Petrosyan (2022) Grotte come spazi rituali. Recenti scavi archeologici nelle grotte dell'Armenia. In N. Negroni Catacchio, C. Metta, V. Gallo, M. Aspesi (a cura di) *Ipogei. La vita, la morte, i culti nei mondi sotterranei. Ricerche e scavi. Preistoria e Protostoria in Etruria XV. Atti del Quindicesimo Incontro di Studi, Valentano (VT), 11-13 Settembre 2020*. Milano, pp. 51-71.
- Petrosyan, A., B. Gasparyan, M.R. Iovino, H. Margaryan, R. Dan, (2022) Recenti studi sull'architettura rupestre nell'Altopiano Armeno: problematiche e prospettive di ricerca. In N. Negroni Catacchio, C. Metta, V. Gallo, M. Aspesi (a cura di) *Ipogei. La vita, la morte, i culti nei mondi sotterranei. Ricerche e scavi. Preistoria e Protostoria in Etruria XV. Atti del Quindicesimo Incontro di Studi, Valentano (VT), 11-13 Settembre 2020*. Milano, pp. 73-95.
- Dan, R., A. Petrosyan, P. Vitolo, B. Gasparyan (2022) From the Ararat Depression to Lake Sevan. An Analysis of Urartian Military Roads in the Territory of Modern-Day Armenia (Late 9th to mid 8th centuries BC). In *Armenia Maritima. Archaeological Heritage of the Land Uduri-Etiumi*. Yerevan, pp. 302-215.
- Dan, R., B. Gasparyan, A. Petrosyan, P. Vitolo, S. Aghaian (2022) Recent Investigations of Rock-cut Structures in Armenia. In *Armenia Maritima. Archaeological Heritage of the Land Uduri-Etiumi*. Yerevan, pp. 316-328.
- Dan, R., P. Vitolo, A. Cesaretti, Z. Hadi Dastjerdi, A. Petrosyan (2022) Urartian Metal Arrowheads in Context. The Leaf-Shaped Arrowheads from the Solak-1/Varsak Excavation (Armenia) in the Frame of Urartian Archaeology. *Mesopotamia*, LVII, pp. 65-88.
- Dan, R., A. Bobokhyan, O. Gasparro, B. Gasparyan, A. Petrosyan, M. Salvini (2023) The Archaeological Site of Garni, Armenia. Pre-Arsacid Archaeological Evidence and an Urartian Inscription of Argišti on a *vishap*. In Y. Grekyan, A. Bobokhyan, *Systemizing the Past, Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday*. Oxford, pp. 56-78.
- Petrosyan, A., R. Dan, P. Vitolo, O. Gasparro, B. Gasparyan (2023) Overlooking the River Hrazdan Valley: The Fortified Site of Tghit in the Tsaghkunyats Mountains, Kotayk Region, Armenia. In Y. Grekyan, A. Bobokhyan, *Systemizing the Past, Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday*. Oxford, pp. 390-405.
- Petrosyan, A., R. Dan, B. Gasparyan (2023) Recent Investigations on the Early Bronze Age Sites in the River Marmarik Valley as Part of the Kotayk Survey Project. In A. Kosyan, P. Avetisyan, K. Martirosian-Olshansky, A. Bobokhyan, Y. Grekyan (a cura di), *Fs Ruben Badalyan, AĴNES/Aramazd*, XVI, 1-2, Oxford, pp. 349-367.

**MEMBRI DELLA
“MISSIONE ARCHEOLOGICA AD ARUCH E DELL’INCASTELLAMENTO SULLA VIA DELLA SETA”**

**ԱՐՈՒՃԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆԱՐՈՑԱԾԻՆՈՒԹՅՈՒՆԸՄԵՏԱՔԱՔՄԻ ՃԱՆԱԳԱՐՀԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ**

Sergio Ferdinandi	Direttore ISMEO
Arsen Bobokhyan	Direttore IAE NAS RA
Artur Petrosyan	Vice-direttore IAE NAS RA
Roberto Dan	Vice-direttore ISMEO
Astghik Babajanyan	Archeologa IAE NAS RA
Priscilla Vitolo	Archeologa
Jorge Cocquyt	Archeologo
Federico Fasson	Archeologo
Elena Fausti	Archeologa
Camilla Felicioni	Archeologa
Francesca Galanti	Archeologa
Chiara Mascarello	Archeologa
Cecilia Romagnoli	Archeologa
Onofrio Gasparro	Topografo



La squadra di archeologi di Aruch nella necropoli di Shamiram.
Արուճի հնագիտական արշավախումբը Շամիրամի դամբարանադաշտում



La squadra di archeologi di
Aruch sul sito di Shamiram.
Արուճի հնագիտական
արշավախումբը Շամիրամ
հնավայրում



La squadra di archeologi
di Aruch davanti alla
Cattedrale di San Grigor,
Aruch.

Արուճի հնագիտական
արշավախումբը Սր.
Գրիգոր եկեղեցու առջև

MEMBRI DEL “KOTAYK SURVEY PROJECT” E DEL “VAYOTS DZOR PROJECT”
«ՎԱՅՈՑ ԶՈՐ ՆԱԽԱԳԾԻ» ԵՎ «ԿՈՏԱՅՔԻ ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ» ԱՆԴԱՄՆԵՐ

Artur Petrosyan	Direttore IAE NAS RA
Boris Gasparyan	Direttore IAE NAS RA
Roberto Dan	Direttore ISMEO
Priscilla Vitolo	Vice-direttrice ISMEO
Varduhy Melikyan	Archeologa
Artak Avetisyan	Archeologo
Annarita Stefania Bonfanti	Archeologa
Andrea Cesaretti	Archeologo
Faezeh Dadfar	Archeologa
Zeinab Hadi Dastgerdi	Archeologa
Francesco Laurita	Archeologo
Marzieh Mehrabani	Archeologa
Ghasem Moradi	Archeologo
Chiara Zecchi	Archeologa
Lorenzo Costantini	Archeobotanico
Lavinia Giorgi	Filologa
Marie-Claude Trémouille	Filologa
Matteo Delle Donne	Archeobotanico
Onofrio Gasparro	Topografo
Simona Tomei	Antropologa
Sosch Aghaian	Architetto



Foto di gruppo di una delegazione di archeologi dell'Istituto IAE NAS RA di Yerevan e della squadra di Solak-1 in visita al sito.

ԳԱԱ ՀԱՐ
 պատվիրակության այցը
 Սոլակ-1 հնավայր



La squadra di archeologi nel sito di Solak-1 insieme alla scolaresca dal vicino villaggio di Solak.

Կոտայքի հետախուզական ծրագրի հնագիտական արշավախումբը Սոլակ համայնքի ներկայացուցիչների հետ Սոլակ-1 հնավայրում



Visita dell'Ambasciatore Alfonso di Riso (al centro) durante lo scavo della tomba nella necropoli di Jrrat.

ՀՀ-ում Իտալիայի դեսպան Ալֆոնսո Դի Ռիսոյի (կենտրոնում) այցը Զրառատի դամբարանադաշտ



Canon

net

isweb

weblive
partner per il web



FONDAZIONE AIDA
ITALIAN DIGITAL
REVOLUTION

nextbites
isn't now
it's already next



noema
DIGITAL